2021 - 2022

ԻՐԱՎԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

«ՏԱՆՍԳԵՆԴԵՐ ԼԳԲԻՔ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՅԼ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԶԵԿՈՒՅՑ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՌՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....2
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....6

ՄԱՍ I. «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ
1.1 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.....9
1.2 ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾԵՐ.....17
1.3 ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԵՐ.....18

ՄԱՍ II. «ՏԱՆՍԳԵՆԴԵՐ ԼԳԲԻՔ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՅԼ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
2.1 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՅԼ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....32
2.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....37
2.3 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ.....41
2.4 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ.....50

ԱՄՓՈՓՈՒՄ.....54
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....55

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]

Ագենդեր «առանց գենդերի» անձ, որը չի նույնականացնում իրեն որևէ գենդերի հետ

Բիսեքսուալ կամ երկսեռ անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների նկատմամբ

Գեյ (նույնասեռական տղամարդ) նույնասեռական տղամարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի տղամարդու հետ

Գենդեր վերաբերում է մարդկանց առնականության և կանացիության ներքին ընկալմանը և փորձին, նաև հասարակական կառուցվածքին, որտեղ սահմանվում են որոշակի վարքագծեր տղամարդկանց և կանանց դերերի համար՝ կախված պատմությունից, հասարակություններից, մշակույթներից և դասակարգերից. գենդերը կապված է հասարակության ակնկալիքների հետ և լոկ կենսաբանական հարց չէ

Գենդերային ինքնություն վերաբերում է յուրաքանչյուր անձի կողմից իր գենդերի ներքին ընկալմանը և անհատական փորձին, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ տրված սեռին՝ ներառյալ սեփական մարմնի ընկալումը և գենդերային այլ արտահայտումները՝ հագուստը, խոսքը և պահելաձևը

Թիրախավորված անձ կամ խումբ սույն ձեռնարկում օգտագործված է նկարագրելու խոցելի խմբերին, որոնք ենթարկվում են իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված՝ ատելության հիմքով հանցագործությունների կամ ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների

Ինտերսեքս մարդ, որը կենսաբանորեն ունի և՛ արական, և՛ իգական սեռերին բնորոշ կենսաբանական առանձնահատկություններ՝ ինչպես քրոմոսոմային կամ հորմոնալ, այնպես էլ սեռական օրգանների ձևով, ինչի արդյունքում չի կարողանում իրեն լիարժեքորեն նույնականացնել ոչ տղամարդու, ոչ էլ կնոջ հետ

---

[1]Սույն եզրույթների հիմնական աղբյուրը՝ «ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի ուղեցույց օգնող մասնագետների համար», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2021 թ., https://www.pinkarmenia.org/ wp-content/uploads/2021/10/specialists-guideline-2021.pdf:

ԼԳԲՏԻՔ համայնք լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս, քվիր անձանց համայնք, որը միավորված է ընդհանուր հետաքրքրություններով, խնդիրներով և նպատակներով. այն իր հերթին բաղկացած է տարբեր ենթահամայնքներից, խմբերից և հանրույթներից

Լեսբի (նույնասեռական կին) նույնասեռական կին, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի կնոջ հետ

Խոցելի անձ կամ խոցելի խումբ անձ կամ խումբ, որոնք իրենց որևէ հատկանիշով կամ կարգավիճակով պայմանավորված տևական ժամանակ գտնվում են խոցելի վիճակում:

Համայնքի անդամներ Տրանսգենդեր ԼԳԲԻՔ, սեռական այլ կողմնորոշվածություն և գենդերային ինքնություն ունեցող անձինք

Հանցանք (հանցագործություն) հանցանք է համարվում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված արարքը

Հետազոտություն «ատելության հիմքով հանցագործությունների կամ ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում» հետազոտությունը՝ 2021 թվականի հուլիսից 2022 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի համար

Հետերոսեքսուալ անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի այլ գենդերի անձանց հետ

Հոմոֆոբիա վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն և/կամ ատելություն նույնասեռականության նկատմամբ

Ոչ բինար ցանկացած գենդերային ինքնություն, որը չի համապատասխանում կանացիության ու առնականության երկբևեռ համակարգին

Պանսեքսուալ մարդ, որը ռոմանտիկ, խորը զգացմունքային, էրոտիկ և սեռական հակումներ ունի՝ անկախ մարդու կենսաբանական սեռից և գենդերային ինքնությունից, ում կարող են գրավել ոչ միայն ցիսգենդեր կամ տրանսգենդեր կանայք կամ տղամարդիկ, այլև ոչ-բինար գենդերային ինքնություն ունեցող և ինտերսեքս մարդիկ

Սեռական կողմնորշվածություն անհատի ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հրապուրանքը նույն կամ հակառակ սեռի անձի հանդեպ

Սեռականություն յուրաքանչյուր անձի կենսաբանական, մտավոր, վարքագծային և սոցիալական բնութագրիչների ամբողջությունը, որը սահմանում է մարդու ինքնությունը, վարքագիծը, կերպարն ու դերը որպես անհատ և որպես հասարակության անդամ

ՍԿԳԻ սեռական կողմնորշվածություն և գենդերային ինքնություն և/կամ գենդերային արտահայտում

Տրանսգենդեր անձ, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից, և ներառում է տրանսսեքսուալ անցյալով կանանց և տղամարդկանց, տրանսսեքսուալ նույնականացող անձանց, տրանսգենդեր անձանց, հագուստափոխ անձանց և այլն. հովանի եզրույթ է և ներառական է տրանսգենդեր, տրանսեքսուալ և այլ ոչ բինար գենդերային ինքնություն ունեցող անձանց համար

Տրանսսեքսուալ (փոխսեռական) անձ, որը վիրաբուժական եղանակով փոխել է իր կեսաբանական սեռը և հանդես է գալիս հակառակ կենսաբանական սեռով

Տրանսֆոբիա բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագծեր, որոնք հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության և գենդերային արտահայտումների վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զզվանքի, վախի և/կամ ատելության վրա

Տուժող (զոհ) անձ, ով խոցելի խմբի անդամ է հանդիսանում, և իր սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված՝ ատելության հիմքով հանցագործությունների կամ ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների հետևանքով պատճառվել է վնաս՝ հոգեբանական, մարմնական, ֆիզիկական

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) ՀՀ Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից որպես իրավապաշտպան հասարակական կազմակերպություն գրանցվել է 2016 թվականի հունվարի 25-ին:

Կազմակերպության հիմնադիրը և նախագահը հիմնադրման պահից առ այսօր հանդիսանում է Լիլիթ Մարտիրոսյանը: Կազմակերպությունը տեղակայված է Երևան քաղաքում, աշխատակազմը բաղկացած է 9 հոգուց:

Իմնադրման պահից Կազմակերպությունն ակտիվ գործունեություն է ծավալում խթանելու տրանս և ԼԳԲԻՔ անձանց իրավունքների պաշտպանությունը, ապահովելու նրանց առողջապահական, հոգեբանական ծառայություններով:

Կազմակերպությունն այս տարիների ընթացքում գործընկերային հարաբերություններ է հաստատել Հայաստանում գործող դիվանագիտական ներկայացուցչությունների, ՄԱԿ գործակալությունների, Եվրոպայի Խորհրդի, ինչպես նաև այլ միջկառավարական և հասարակական միջազգային և տեղական կազմակերպությունների ու ցանցերի հետ:

Կազմակերպությունն աշխատում է ռազմավարական 3 ուղղություններով՝

1. համայնքային առողջության և անվտանգության պահպանում.
2. իրավապաշտպանություն և օրենսդրական բարեփոխումներ.
3. հանրային կարծիքի փոփոխություն և կարծրատիպերի կոտրում:

Կազմակերպությունը պարբերաբար կազմակերպում է դասընթացներ, հանդիպումներ, սեմինարներ և այլ միջոցառումներ՝ բարելավելու տրանս և ԼԳԲԻՔ համայնքի իրավագիտակցության մակարդակը, իրազեկելու հանրությանը տրանս և ԼԳԲԻՔ անձանց խնդիրների մասին՝ աշխատելով միջազգային և տեղական կազմակերպությունների և պետական մարմինների հետ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպությունը 2021 թվականի հուլիս ամսից մինչև 2022 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում շարունակել է իրավական աջակցություն տրամադրել տրանս և ԼԳԲԻՔ անձանց, նրանց ընտանիքների անդամներին, համակիրներին, ակտիվիստներին:

Կազմակերպության փաստաբանները իրավական աջակցության շրջանակում որպես ներկայացուցիչներ հանդես են եկել դատարաններում, ոստիկանությունում, քննչական և այլ պետական մարմիններում:

Կազմակերպությունը շարունակում է վարել բոլոր դատական գործընթացները, որոնք սկսվել են նախորդ տարիներին և առ այսօր շարունակվում են, այդ թվում նաև մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

2022 թվականի դեկտեմբերի դրությամբ Կազմակերպության փաստաբանների կողմից վարվում են թվով 6 դատական գործեր, որից 4-ը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում, 1-ը՝ ՀՀ վարչական դատարանում, 1-ը՝ ՀՀ վճռաբեկ դատարանում: Նշված քրեական գործերից 3-ում փաստաբանները հանդես են գալիս որպես տուժողի ներկայացուցիչ, 2 գործում՝ որպես մեղադրյալի պաշտպան, իսկ վարչական և քաղաքացիական գործերով՝ որպես հայցվորի ներկայացուցիչ:

2022 թվականի ընթացքում ավարտվել են թվով 3 դատական գործեր՝ բոլորը հաջող ելքով, որոնցից երկուսը՝ քաղաքացիական, իսկ մեկը՝ քրեական գործ:

Ըստ այդմ՝ 2021 հուլիսից 2022 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում իրավաբանական խորհրդատվություն է տրվել թվով 327 անձի, որոնք վերաբերել են՝

- անձնագրի փոփոխության հարցերին,
- պարտադիր զինվորական ծառայության հարցերին,
- հորմոնաթերապիային վերաբերող խնդիրներին,
- պետական մարմինների հետ հարաբերություններին,
- ընտանեկան և աշխատանքային հարաբերություններին,
- սպասարկման ոլորտի հետ կապված խնդիրներին:

Կազմակերպությունը շարունակում է ատիվ ներգրավվածություն ունենալ Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց իրավունքների պաշտպանության գործում, այդ նպատակով օգտագործելով ՀՀ օրենսդրությամբ թույլատրված և հասանելի միջոցները՝ դատարանների, ոստիկանության և այլ պետական մարմինների:

Սույն հաշվետվության մեջ ներկայացվում են Կազմակերպության 2021թ.-ի հուլիսից 2022թ.-ի դեկտեմբեր ընկած ժամանակահատվածի գործունեությունը, այդ թվում՝ տրանսգենդեր և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների վերաբերյալ զեկույցը, 2022 թվականի ընթացքում Կազմակերպության իրավապաշտպան գործունեության արդյունքները, ռազմավարական դատական գործընթացները և հետագա ռազմավարական ուղղությունների վերաբերյալ Կազմակերպության տեսլականը և նախանշվող գործողությունները:

ՄԱՍ I

ԻՐԱՎԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՈՒՆ

2021 հուլիս – 2022 դեկտեմբեր

1.1 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կ. Ա.-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (սեռի փոփոխություն անձնագրում)

Կ.Ա.-ն 30.10.2018թ.-ին ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժին ներկայացրել է դիմում ծննդյան ակտում ուղղումներ կատարելու վերաբերյալ:

Կ.Ա.-ն ներկայացված դիմումով խնդրել է ուղղում կատարել ծննդյան թիվ 870 ակտում, այն է՝ սեռի վերաբերյալ սյունակում իգական նշումը ուղղել արական նշումով:

ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի կողմից 17.12.2018թ. կազմված եզրակացությամբ (այսուհետ՝ Եզրակացություն) դիմումը մերժվել է:

Տվյալ դեպքում, ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժինը, մերժելով Կ.Ա.-ի դիմումը, հղում է կատարել ՀՀ արդարադատության նախարարի 14.05.2007թ. հրամանին, որը սահմանում է, որ ՔԿԱԳ մարմինը մերժում է քաղաքացիական կացության ակտի գրանցման մեջ փոփոխությունների, լրացումների և ուղղումների կատարումը, եթե ներկայացված փաստաթղթերը լիարժեք չեն, չեն բխում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից կամ փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ կատարելու պահանջը հիմնավորված չէ, փաստաթղթերում առկա են տեղեկությունների անհամապատասխանություններ:

Համապատասխան կարգավորումները, որոնք ըստ ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի բացակայել են դիմումում, սահմանվում է *«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով, որի 70-րդ հոդվածի համաձայն՝ «Քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու մասին ՔԿԱԳ մարմնի եզրակացությունը կազմվում է մասնավորապես հետևյալ դեպքերում, երբ՝…*

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական կազմակերպությունը տվել է սեռի փոփոխության մասին սահմանված ձևի փաստաթուղթ»:

Այսինքն, եթե անձը ցանկանում է փոփոխություն կատարել քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ (սեռի մասին գրառման փոփոխություն), նա պետք է՝

1. իրականացնի սեռափոխություն,

2. ներկայացնի ՀՀ օրենսդրության սահմանված կարգով բժշկական կազմակերպության կողմից տրված սեռի փոփոխության մասին փաստաթուղթ:

Քննարկվող դեպքում, որպեսզի Կ.Ա.-ն կարողանար սեռի վերաբերյալ սյունակում «իգական» նշումը ուղղեր «արական» նշումով, նա պետք է իրականացներ թվարկված գործողությունները, այն է՝ իրականացնել սեռափոխություն և ներկայացներ ՀՀ օրենսդրության սահմանված կարգով բժշկական կազմակերպության կողմից տրված սեռի փոփոխության մասին փաստաթուղթ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Գարսոնը և Նիկոտը ընդդեմ Ֆրանսիայի (ECHR 121 (2017) 06.04.2017) գործով կայացրած վճռով[2] անդրադարձ է կատարել նշված հիմնախնդիրներին, մասնավորապես, նշելով, որ *տրանսգենդեր անձանց*

[2] Տես՝ https://hudoc.echr.coe.int/spa#{%22itemid%22:[%22001-172913%22]}

սեռական ինքնության ճանաչումը բժշկական միջամտությունների ենթարկվելուց հետո, որը նրանք չեն ցանկացել իրականացնել, նշանակում է անձնական կյանքի հարգելու իրավունքի լիակատար ապահովման մերժում: Դատարանը համարեց, որ անձի տեսքի փոփոխությունը, սեռափոխության վիրահատության, ստերջացման կամ այլ բժշկական միջամտությունների միջոցով, հանգեցնում է անդառնալի հետևանքների և խախտում է անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը: Դատարանը համարեց, որ պատասխանող պետությունը ձախողվել է իր պոզիտիվ պարտավորության իրականացման հարցում՝ ապահովելու անձնական կյանքը հարգելու իրավունքը: Դատարանը գտնում է, որ այս առնչությամբ 8-րդ հոդվածի խախտում է եղել:

Բացի այդ, պարտադիր ստերջացումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննադատել է Y.Y. ընդդեմ. Թուրքիայի և Soares de Melo ընդդեմ Պորտուգալիայի գործերում:

Այսինքն, պետք է արձանագրել, որ պետությունը չի կարող անձին հարկադրել կատարել սեռափոխության վիրահատություն, քանի որ այն ամբողջովին խաթարում է պետության պարտավորությունը՝ հարգելու յուրաքանչյուրի անձնական կյանքի և ազատության անձեռնմխելիությունը: Գենդերային ինքնությունը մարդու մասնավոր կյանքի մասն է կազմում և անձը չպետք է իր ֆիզիկական և հոգևոր անձեռնմխելիության և գենդերային ինքնության միջև կատարի ընտրություն: Բացի այդ, գենդերային ինքնության ապացույց պահանջելը նվաստացուցիչ է, ոտնահարում է անձի արժանապատվությունը:

ՀՀ սահմանադրության 26-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Այսպիսով, վերոգրյալ փաստական և իրավական հանգամանքների ուսումնասիրությունը հանգում է նրան, որ Հայաստանի Հանրապետությունում առկա կարգավորումները հարկադրում են անձին ենթարկվելու սեռափոխության վիրահատության (ստերջացման)՝ քաղաքացիական կացության գրանցման ակտերում փոփոխություններ կամ ուղղումներ կատարելու համար, ինչը ինչպես արդեն փաստվեց և հիմնավորվեց, հանդիսանում է մարդու անձնական կյանքի կոպիտ միջամտություն, եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև ազգային օրենսդրության խախտում: Այսպիսով, պետք է արձանագրել, որ պետությունը ստիպում է անձին դիմելու անդառնալի վիրաբուժական միջամտության, քաղաքացիական կացության գրանցման ակտում ուղղում կատարելու համար, ինչն անթույլատրելի է և հակասում է ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ Հայաստանում նաև բացակայում են իրավական կարգավորումները, ըստ որոնց կսահմանվեր սեռափոխության մասին բժշկական կազմակերպության կողմից տեղեկանք տրամադրելու նորմերը և կարգավորումները:

Հ.Գ. Ներպետական բոլոր դատական ատյանները սպառելուց հետո Կազմակերպության փաստաբանի կողմից Կ.Ա.-ի անունից 2022 թվականի օգոստոսի 12-ին ներկայացվել է բողոք ընդդեմ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: 2023 թվականի հունվարի 23-ին Կազմակերպությունը ՄԻԵԴ-ից ստացել է ծանուցում առ այն, որ Կ.Ա.-ն ընդդեմ ՀՀ գործին տրվել է դիմումի համար, առաջիկայում սպասվում է ՄԻԵԴ առաջին որոշումը դիմումի կապակցությամբ:

Լիլիթ Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության (ատելության խոսք, բռնության հրահրում և անձնական տվյալների հրապարակում)

ՀՀ քաղաքացի Լիլիթ Մարտիրոսյանը, ով տրանսգենդեր կին է և հանդիսանում է «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահը, 2019թ. ապրիլի 5-ին ելույթ է ունեցել ՀՀ ազգային ժողովում «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում» թեմայով խորհրդարանական լսումներում: Նրա ելույթից հետո, բազմաթիվ անձինք սկսեցին ատելության խոսքի հանրային դրսևորումները և սպանության ապառնալիքները Լիլիթ Մարտիրոսյանի նկատմամբ, նշելով, որ նա տրանսգենդեր անձ է և իրավունք չունի ելույթ ունենալ ՀՀ ազգային ժողովում:

Լիլիթ Մարտիրոսյանը 06.04.2019թ.-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Կենտրոնի բաժին ներկայացրել է հաղորդում, որ իր կողմից մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ Ազգային Ժողովում ելույթից հետո «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցի առաքիչը համացանցում իր ֆեյսբուքյան էջի միջոցով, անօրինական կերպով հրապարակել է իր անձնական տվյալները, այն է՝ իր բնակության հասցեն: Մասնավորապես, «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցի առաքիչը, ով Լիլիթ Մարտիրոսյանի պատվերով սնունդ էր առաքել վերջինիս, տեսնելով, որ սնունդ պատվիրողը Լիլիթ Մարտիրոսյանն է, հրապարակել էր վերջինիս հասցեն ֆեյսբուքյան իր անձնական էջում, ինչպես նաև բոլոր ցանկացողներին պատրաստակամություն էր հայտնել տրամադրել Լիլիթ Մարտիրոսյանի հեռախոսի համարը:

Նույն օրը, Լիլիթ Մարտիրոսյանը հաղորդում է տվել, որ «Արծիվ 30 Արարատ մահապարտ» խումբ անվանումով անձնակազմի անդամի կողմից ստացել է սպանության և բռնության սպառնալիքներ, որը հրապարկվել է տեսանյութի միջոցով: Մասնավորապես սպառնալիքներ հնչեցնող անձը իր տեսանյութում, որը հասանելի է YouTube կայքում, տեղադրված տեսանյութի[3] 2.52 վայրկյանին սպառնում է սատկացնել նրան և իշխանություններին հորդորում է իրեն մարդասպան չսարքել:

ՀՀ ոստիկանության Կենտրոնի բաժնի հետաքննիչ Ա.Ոսկանյանի կողմից 16.04.2019 թ.-ին կայացվել է որոշում՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Նշված որոշումը բողոքարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազություն: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ա. Աֆանդյանի 13.05.2019թ-ի որոշմամբ բողոքը մերժվել է: Դատախազության որոշման դեմ 03.06.2019թ-ին ներկայացվել է բողոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 09.09.2019թ-ի որոշմամբ բողոքը մերժվել է: Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 08.11.2019 թ-ի որոշմամբ բողոքը մերժվել է, որի դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք 16.12.2019թ-ին: ՀՀ վճռաբեկ դատարանը 17.01.2020թ.-ին վերադարձրել է Լիլիթ Մարտիրոսյանի

[3] Տեսանյութի հղումը՝ https://www.youtube.com/watch?v=0JFm45dPuLw

վճռաբեկ բողոքը՝ այն հիմնավորմամբ, որ վճռաբեկ բողոքի պատճենը Լիլիթ Մարտիրոսյանը չի ուղարկել շահագրգիռ անձանց՝ «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցի առաքիչ Կարապետ Կարապետյանին և «Արծիվ 30 Արարատ մահապարտ» խումբ անվանումով անձնակազմի անդամ Եփրեմ Մարգարյանին:

23.01.2020թ.-ին Լիլիթ Մարտիրոսյանը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոքը, միևնույն ժամանակ, նշելով, որ Եփրեմ Մարգարյանը և Կարապետ Կարապետյանը համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 31-րդ կետի, չեն հանդիսանում դատավարության մասնակիցներ և Լիլիթ Մարտիրոսյանը վճռաբեկ բողոքի պատճենը նրանց ուղարկելու պարտավորություն չունի, իսկ դատավարության մյուս մասնակիցներին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն վճռաբեկ բողոքի պատճենն ուղարկվել է: ՀՀ վճռաբեկ դատարանը 28.02.2020թ.-ին որոշում է կայացրել վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին՝ նշելով, որ Լիլիթ Մարտիրոսյանը չի շտկել վճռաբեկ բողոքում առկա թերությունները:

Չքննելով և Լիլիթ Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքի վերաբերյալ որոշում չկայացնելով, ՀՀ վճռաբեկ դատարանը խախտել է Լիլիթ Մարտիրոսյանի մի շարք իրավունքներ, ուստի ներկայացվել է բողոք Եվրոպական դատարան:

Մասնավորապես, բողոքում փաստարկվել է, որ խախտվել է մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ, 6-րդ, 8-րդ և 13-րդ հոդվածները:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը դրսևորվում է Լիլիթ Մարտիրոսյանի նկատմամբ հնչեցված սպանության և բռնության սպառնալիքների և այդ առնչությամբ իրավասու մարմինների կողմից որևէ քննություն չիրականացնելու մեջ: Մասնավորապես, թե՛ հետաքննության մարմիններում, և թե՛ դատարաններին ուղղված բողոքներում Լիլիթ Մարտիրոսյանը նշել է, որ իրեն ուղղված սպանության սպառնալիքները անհրաժեշտ է դիտարկել նաև խոշտանգման համատեքստում, սակայն, այդ առումով որևէ քննություն չի իրականացվել: Ավելին, թե՛ առաջին ատյանի դատարանը, և թե՛ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը իրենց որոշումներում որևէ կերպ չեն անդրադարձել այդ հանգամանքին: Մասնավորապես, նշվել է մեր կողմից, որ «որևէ անձի խոշտանգմամբ սպառնալը կարող է համարվել որպես առնվազն անմարդկային վերաբերմունք» (տե՛ս Քեմփբելը և Քոզանսն ընդդեմ Միացյալ Թագավորության, § 26) և «մասնավորապես, ֆիզիկական խոշտանգումից վախն ինքնին կարող է համարվել որպես հոգեկան խոշտանգում: Այն որակումը, թե արդյոք տվյալ ֆիզիկական խոշտանգման սպառնալիքը համարվում է հոգեկան խոշտանգում, կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, կախված է տվյալ գործի հանգամանքներից, այդ թվում, մասնավորապես՝ գործադրված ճնշման ծանրությունից և պատճառած հոգեկան տառապանքի ուժգնությունից» (Գեֆգենն ընդդեմ Գերմանիայի ([ՄՊ], թիվ 22978/05, ՄԻԵԴ 2010)):

Նման պարագայում, խախտվել է նաև Լիլիթ Մարտիրոսյանի՝ խոշտանգումներից զերծ լինելու իրավունքը, ինչը նաև դրևսրովել է պետական մարմինների և դատական մարմինների այդ հարցը քննելու բացարձակ հրաժարումով, որևէ կերպ, որևէ իրավասու մարմին չի անդրադարձել այդ հարցին և որևէ իրավական գնահատական չի տվել:

Հոդված 8-ի խախտումը դրսևորվում է նրանով, որ Լիլիթ Մարտիրոսյանը արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներից զրկված լինելով, չի կարողացել պաշտպանել իր անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը: Ներպետական իրավասու մարմինները, հաշվի չեն առել, որ Լիլիթ Մարտիրոսյանի բնակության վայրի հանրայնացումը «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցի առաքիչի կողմից խախտել է Լիլիթ Մարտիրոսյանի անձնական կյանքի իրավունքը: Հետաքննության մարմինները և առաջին ատյանի ու ՀՀ վերաքննիչ քրեական դատարանները նշել են, որ Լիլիթ Մարտիրոսյանի հաշվառման հասցեն հանրամատչելի տեղեկություն է, և դրա հրապարակումը չի խախտել Լիլիթ Մարտիրոսյանի իրավունքները, այնինչ, Լիլիթ Մարտիրոսյանը բողոքել էր, որ հրապարակվել է նրա փաստացի բնակության հասցեն, որը հանրամատչելի չի եղել, որևէ երրորդ անձի այդ մասին հայտնի չի եղել, և դրա հրապարակման թույլտվություն Լիլիթ Մարտիրոսյանը չի տվել, սակայն այդ հանգամանքին ուշադրություն չի դարձվել: Ավելին, եթե նույնիսկ իսկապես Լիլիթ Մարտիրոսյանի փաստացի բնակության հասցեն հանրամատչելի լիներ հանրության համար, նույնիսկ այդ դեպքում, հաշվի առնելով գործի հանգամանքները, Լիլիթ Մարտիրոսյանի նկատմամբ տվյալ ժամանակահատվածում հասարակության որոշ անդամների կողմից ատելության, սպանության սպառնալիքների առկայությունը, Լիլիթ Մարտիրոսյանը կարող էր ակնկալել իր անձնական կյանքի, տվյալների պաշտպանություն, որի մասին նշել է նաև եվրոպական դատարանը. «Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում այն հանգամանքը, որ խնդրո առարկա տեղեկություններն արդեն գտնվում են հանրային տիրույթում, դրանք անհրաժեշտաբար չի զրկում 8-րդ հոդվածով նախատեսված պաշտպանությունից («Սատակունան Մարկինապորսի Օյը և Սատամեդիա Օյն ընդդեմ Ֆինլանդիայի» [ՄՊ], § 134): Հետևաբար, այն պարագայում, երբ Լիլիթ Մարտիրոսյանի փաստացի բնակության հասցեն որևէ կերպ հանրայնացված չի եղել, որևէ անձ իրավունք չուներ առանց Լիլիթ Մարտիրոսյանի համաձայնության հրապարակեր այն: Հետևաբար, համադրելով Կոնվենցիայի 6 և 13 հոդվածների հետ, խախտվել է նաև կոնվենցիայի 8-րդ հոդվածը:

Հոդված 13-ի խախտումը դրսևորվել է հետևյալ կերպ: Առանց քննության թողնելով Լիլիթ Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը խախտել է Լիլիթ Մարտիրոսյանի արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի իրավունքը: Մասնավորապես, որպես պատճառ, վճռաբեկ դատարանը նշել էր, որ վճռաբեկ բողոքի պատճենը Լիլիթ Մարտիրոսյանը չէր ուղարկել շահագրգիռ անձանց, ինչպիսիք դատարանը դիտել էր Եփրեմ Մարգարյանին և Կարապետ Կարապետյանին, այնինչ, ինչպես փաստվեց, նրանք չեն հանդիսացել դատավարության մասնակիցներ, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 31-րդ կետի համաձայն՝ դատավարության մասնակիցներն են դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը: Հետևաբար, վճռաբեկ բողոքի պատճենը որևէ այլ անձի ուղարկելու պարտավորություն Լիլիթ Մարտիրոսյանը չուներ: ՀՀ վճռաբեկ դատարանը, ոչ իրավաչափ պարտավորություն դնելով Լիլիթ Մարտիրոսյանի առջև, խախտել է նրա արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի և արդար դատաքննության իրավունքը՝ հրաժարվելով ըստ էության քննել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները:

Եվրոպական դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է դատական մատչելիության խնդրին, մասնավորապես նշելով. «Պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «…պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000), կամ «Սահմանափակումները չեն կարող համապատասխանել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ բացակայում է ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև պատճառական կապը (Case of Marini v. Albania (application no. 3738/02), Judgment of 18 December 2007, para. 113)»:

Հետևաբար, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կիրառված նորմը ոչ միայն չէր համապատասխանում օրենքին՝ ՀՀ քրեական դատավարությանը, այլև նման կիրառումը անհամաչափորեն սահմանափակել է Լիլիթ Մարտիրոսյանի դատական մատչելիության և հետևաբար արդար դատաքննության իրավունքը: Վերջինիս վրա դրվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից չբխող պահանջ, որի կատարումը չէր բխում նրա պարտականություններից:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման հետ միաժամանակ, խախտվել է նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածը, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից Լիլիթ Մարտիրոսյանի վրա դրված ոչ իրավաչափ պարտավորությունը զրկել է վերջինիս արդյունավետ իրավական պաշտպանության միջոցից: Իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու կանոնի նպատակն է հնարավորություն տալ ներպետական մարմիններին, մասնավորապես՝ դատարաններին, կանխելու կամ վերականգնելու Կոնվենցիայի ենթադրյալ խախտումները: Սա հիմնված է 13-րդ հոդվածում արտացոլված այն ենթադրության վրա, համաձայն որի Կոնվենցիայի իրավունքների խախտումների համար ներպետական իրավական համակարգը պետք է նախատեսի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ (Selmouni ընդդեմ Ֆրանսիայի (ՄՊ), § 74, Kudła ընդդեմ Լեհաստանի (ՄՊ), § 152):

Ուստի, եվրոպական դատարան ներկայացված բողոքով Լիլիթ Մարտիրոսյանն ակնկալում է իր իրավունքների խախտման ճանաչումը եվրոպական դատարանի կողմից:

Հ.Գ. Բողոքը եվրոպական դատարան ներկայացվել է 2020 թվականի սեպտեմբերի 9-ին: Այսպիսով, ներկայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանում է գտնվում Կազմակերպության կողմից ներկայացված երկու բողոք, որոնք ունեն ռազմավարական նշանակություն Կազմակերպության համար:

1.2 ԱՎԱՐՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ա.Ք.-ն ընդդեմ Ա.Կ.-ի

Ա.Ք.-ն, ով տրանսգենդեր անձ է, դիմել էր Կազմակերպություն, հայտնելով, որ իր ծանոթներից մեկը, իրենից պարտքով վերցնելով 6 միլիոն ՀՀ դրամի չափով գումար, երկար ժամանակ հրաժարվում է այն վերադարձնել:

Կազմակերպության կողմից ներկայացվել էին հայցադիմումներ՝ գումարի բռնագանձնման պահանջի մասին: Բավարարելով մեր հայցը՝ վճիռը ուղարկվել էր ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ այն ի կատար ածելու համար:

Կատարողական գործողությունների ընթացքում պարզվել էր, որ պատասխանող Ա.Կ.-ն ունի համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույք, որից հետո Կազմակերպության իրավաբանը դիմել էր դատարան՝ պատասխանող Ա.Կ.-ի բաժինը ընդհանուր գույքից առանձնացնելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հրապարակային աճուրդով վաճառելու պահանջով:

Արդյունքում դատարանը բավարարեց ամբողջությամբ ներկայացված պահանջները և վճռեց հրապարակային սակարկություններով վաճառել Ա.Կ.-ի գույքը:

Գ.Թ.-ի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառվեց

2021թ-ին Կազմակերպությանն էր դիմել տրանսգենդեր Գ.Թ.-ն և հայտնել, որ իրեն մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2021թ-ի սեպտեմբերի 17-ին, չունենալով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք և գտնվելով ոչ սթափ վիճակում, վարել է ավտոմեքենա: ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային բաժնում հարուցվել էր քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով: Գ.Թ.-ն «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ին խնդրել էր ստանձնել իր շահերի պաշտպանությունը:

Կազմակերպությունը անմիջապես ձեռնամուխ եղավ Գ.Թ-ի իրավունքների պաշտպանությանը և գործով որպես պաշտպան ներգրավվեց կազմակերպության փաստ աբանը:

Կազմակերպության հետևողական և պաշտպանի աշխատանքների շնորհիվ Գ.Թ.-ի նկատմամբ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 10.03.2022 թ.-ին կայացված դատավճռով նշանակվեց մեղմ պատիժ՝ ազատազրկման ձևով՝ 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով՝ Դատարանը որոշեց Գ.Թ.-ի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան՝ 1 (մեկ) տարի ժամկետով:

Դատախազը, չհամաձայնելով դատավճռի հետ՝ վերաքննիչ բողոք էր ներկայացրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, պահանջելով պատիժը պայմանականորեն չկիրառելու մասով դատավճիռը բեկանել:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր 23.09.2022թ-ի որոշմամբ՝ ամբողջությամբ մերժեց դատախազի բողոքը՝ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 10-ի դատավճիռը թողնելով անփոփոխ:

Արդյունքում Գ.Թ.-ի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվի, վերջինս կմնա ազատության մեջ:

1.3 ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԵՐ

Քրեական գործեր

Գործ 1. Կազմակերպությանն է դիմել սեքս աշխատող Ա.Ս.-ն և հայտնել, որ Գ.Վ.-ի կողմից ենթարկվել է սեռական շահագործման, հարուցվել է քրեական գործ, ինքը ճանաչվել է տուժող, որն ուղարկվել է դատարան, ունի իր իրավունքների պաշտպանության անհրաժեշտություն:

Սույն գործի նյութերի ուսումնասիրման արդյունքում պարզվեց, որ Գ.Վ.-ն, Ա.Ս.-ին սեռական շահագործման մեջ դնելու դիտավորությամբ վերջինիս տվել է ոսկի, յուրաքանչյուր գրամի դիմաց 70 ԱՄՆ դոլար վերադարձնելու պայմանով: Հետագայում Գ.Վ.-ն կրկին ոսկյա զարդեր է տվել և ստիպել ուրճացված չափի գումարներ մարել ամեն օր: Արդյունքում Ա.Ս.-ն ընկել է ֆինանսական կախվածության մեջ Գ.Վ.-ից և ամենօրյա ռեժիմով հարկադրաբար զբաղվել է սեքս աշխատանքով «Տեցի կռուգ» կոչվող տեղանքում, իսկ ստացած գումարները՝ փոխանցել Գ.Վ.-ին: Բացի այդ, 2021թ-ին Գ.Վ.-ն Ա.Ս.-ի տանը վերջինիս նկատմամբ կիրառել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն, ստիպել, որ շարունակի ամենօրյա ռեժիմով իրեն գումարների փոխանցումը և հեռացել՝ այդ կերպ նրան դնելով շահագործման վիճակի մեջ և շահագործել: Քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք են բերվել բավարար ապացույցներ, համաձայն որոնց, որ Գ.Վ.-ի գործողությունների հետևանքով տուժող Ա.Ս.-ին պատճառվել է խոշոր չափերի վնաս, որն ընդհանուր կազմում է 6,144,530 ՀՀ դրամ գումար:

Վերը թվարկած հանցավոր արարքների համար Գ.Վ.-ի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասով (4 դրվագ): Սույն քրեական վարույթի ընթացքում Ա.Ա.-ն ճանաչվել է տուժող:

Գործի դատաքննության նախապատրաստական փուլի ընթացքում փաստաբանների կողմից տուժող Ա.Ս.-ի անունից ընդդեմ մեղադրյալ Գ.Վ.-ի ներկայացվել է գույքային հայց՝ 6,144,530 ՀՀ դրամի չափով՝ որպես հանցագործությամբ սեքս աշխատող Ա.Ս.-ին պատճառված վնասի հատուցում:

Ներկայումս գործը գտնվում է դատաքննության փուլում, հերթական դատական նիստ է նշանակվել 2023թ-ի մարտին:

Գործ 2. Կազմակերպությանն է դիմել տրանս անձ Ա.Ա.-ն և հայտնել, որ որպես ամբաստանյալ՝ ունի իր իրավունքների դատական պաշտպանության անհրաժեշտությունը: Ա.Ա.-ն պատմել է, որ 2017 թ-ի սեպտեմբերի 11-ի գիշերը գտնվել է Բեյրութի փողոցի մոտ Տ.Ք.-ի, Ս.Պ.-ի, Ա.Ս.-ի հետ: Ժամը 00:06-ի սահմաններում, Բեյրութի փողոցի մոտով անցել է սև գույնի ավտոմեքենա, որը կանգնել է իրենց մոտ, և մեքենայի հետնամասում նստած աղջիկը սկսել է բջջային հեռախոսով նկարել և ծաղրել իրենց: Խնդրել են իրենց չնկարահանել, սակայն մեքենայի վարորդը հայհոյել է իրենց և դուրս գալով մեքենայից՝ հարձակվել է Ս.Պ.-ի և Ա.Ս.-ի վրա, ձեռքերով հարվածներ է հասցրել վերջիններին, որի արդյունքում Ս.Պ.-ն ընկել է գետնին:

Մեքենայի վարորդը քար է վերցրել, քարով հարվածել է Ա.Ս.-ի գլխին, հետո ձեռքով սկսել է խեղդել վերջինիս, հանել է Ա.Ս.-ի կեղծամը և վազելով մետել է այգի: Ժամանել են ոստիկանության աշխատակիցները, մեքենայի վարորդը մատնացույց է արել Ա.Ս.-ին և Ս.Պ.-ին, որոնց հետ վիճաբանել է: Ա.Ա.-ն և Տ.Ք.-ն կամավոր են գնացել ոստիկանություն՝ որպեսզի իրենց ընկերներին մենակ չթողնեն:

Այնինչ հարուցվել է քրեական գործ և Ա.Ա.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, թե իբր մեքենայի հետնամասում նստած աղջկա մազերից երկու ձեռքով քաշել է՝ առողջությանը պատճառելով ուժեղ ֆիզիկական ցավ, հայհոյանքներ է հնչեցրել մեքենայում գտնվող անձնաց հասցեին, ձեռքերով և ոտքերով հարվածել է մեքենային, քարեր և գարեջրի շշեր է նետել մեքենայից դուրս եկած վարորդի վրա: Մեքեբնային հասցված վնասը գնահատվել է 405,000 ՀՀ դրամ:

Հարուցվել է քրեական գործ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Ներկայումս գործը քննվում է դատաքննության փուլում, հերթական դատական նիստը նշանակվել է 2023թ-ի մայիսին:

Գործ 3. Տրանս անձ Գ.Թ.-ն դիմել է Կազմակերպությանը և հայտնել, որ անհայտ անձի, հետագայում՝ ամբաստանյալ Ա. Շաղոյանի կողմից ենթարկվել է ծեծի, նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, որից հետո կրակայրիչով այրել են նրա գլխին եղած շուրջ 95 սմ երկարության բնական մազերից պատրաստված կեղծամը՝ պատճառելով խոշոր չափերի՝ 1,970,000 ՀՀ դրամ արժողության գույքային վնաս: Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 118-րդ հոդվածի և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով: Գ.Թ.-ն ճանաչվել է տուժող:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների համակցությամբ հիմնավորվել է Ա. Շաղոյանի կողմից տրանս անձ Գ.Թ.-ին ծեծի ենթարկելու, նրա կեղծամն այրելու և գույքային վնաս պատճառելու հանգամանքները և քրեական գործն ուղարկվել է դատարան ըստ էության քննելու համար:

Դատական գործի ընթացքում փաստաբանի մասնակցությամբ իրականացված քննությունը ևս մեկ անգամ հաստատել է մեղադրանքը, սակայն, դատավորի փոփոխության արդյունքում գործը փոխանցվել է մեկ այլ դատավորի, ինչի հետևանքով դատաքննությունը երկարել է:

Ներկայումս գործը քննվում է դատաքննության փուլում, հերթական դատական նիստ դեռ չի նշանակվել:

Գործ 4. Կազմակերպությանն է դիմել տրանս անձ Հ.Տ-Ռ.-ն և հայտնել, որ մի քանի հոգի, ովքեր զբաղվում են ոսկու առևտրով, իր հետ գտնվել են առևտրային հարաբերությունների մեջ: Որոշակի ժամանակ Հ.Տ-Ռ.-ն նշված անձանցից վերցրել է ոսկյա զարդեր, գրավադրել բանկում, այնուհետև դրանք հանել բանկից և վերադարձրել նշված անձանց:

Սակայն, հերթական անգամ, երբ նա գրավադրել է այդ անձանցից վերցրած ոսկյա զարդերը, վերջիններս անհիմն մեղադրել են իրեն, որ ինքը չի ցանկանում վերադարձնել նրանց ոսկյա զարդերը՝ ընդհանուր 123 գրամ, այնինչ, հասկանալով, որ տվյալ անձինք ցանկանում են խաբել իրեն, Հ.Տ.Ռ.-ն հենց բանկից զանգահարել է ոստիկանություն և ահազանգել կատարված մասին: Ոստիկանություն են զանգահարել նաև նշված անձինք և հայտնել, թե իբր Հ.Տ.Ռ.-ն ցանկանում է ոսկյա զարդերը հափշտակել և հեռանալ:

Արդյունքում հարուցվել է քրեական գործ և Հ.Տ-Ռ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Նախաքննության ընթացքում Հ.Տ.Ռ.-ի շահերը պաշտպանել է Կազմակերպության փաստաբանը, քննիչը դատարան միջնորդություն է ներկայացրել Հ.Տ.Ռ.-ին կալանավորելու վերաբերյալ, սակայն, փաստաբանի աշխատանքի արդյունքում դատարանը մերժել է կալանավորել տրանս անձ Հ.Տ.Ռ.-ին, վերջինիս նկատմամբ կիրառվել է ազատությունից չզրկելու հետ կապված խափանման միջոց:

Փաստաբանի կողմից նախաքննության ընթացքում ներկայացվել է նաև միջնորդություն՝ Հ.Տ.Ռ.-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ, ինչը սակայն քննիչի կողմից մերժվել է և գործն ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար:

Ներկայումս գործը գտնվում է դատաքննության փուլում, հերթական դատական նիստը նշանակվել է 2023թ-ի ապրիլին:

Քաղաքացիական գործ

Գործ 5. Գրասենյակ է դիմել Ա.Ա.-ն և հայտնել, որ 2020 թվականի կորոնավիրուսի համավարակի ընթացքում աշխատանքի է անցել Երևան քաղաքում սրճարանային բիզնեսով զբաղվող ընկերություններից մեկում, սակայն, աշխատանքային պայմանագիր չի կնքել, որի պատճառով, գործատուն հրաժարվել է իրեն վճարել մեկ ամսվա աշխատավարձը: Ուսումնասիրելով Ա.Ա.-ի ներկայարած փաստերը, այդ թվում՝ իր և գործատուի միջև սոցիալական ցանցերով խոսակցությունները՝ Կազմակերպության փաստաբանի կողմից ներկայացվեց հայցադիմում աշխատանքային հարաբերությունները ծագած ճանաչելու և չվճարված աշխատավարձի գումարը բռնագանձելու պահանջների մասին:

Առաջին երկու դատական ատյաններում Ա.Ա.-ի անունից ներկայացրած հայցը և բողոքը մերժվելուց հետո 2022 թվականի դեկտեմբեր ամսին ներկայացվեց վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ այս պահի դրությամբ որևէ որոշում դեռևս առկա չէ:

Վարչական գործ

Գործ 6. Կազմակերպություն է դիմել ԼԳԲՏԻՔ համակիր Ա.Մ.-ն, ով հայտնել է, որ ոստիկանության կողմից անհիմն կերպով զրկվել է ավտոմեքենա վարելու իրավունքից մեկ տարի ժամկետով: Ներկայացված փաստաթղթերի հիման վրա ներկայացվեց վարչական բողոք, ինչը սակայն մերժվեց, որից հետո Կազմակերպության փաստաբանները ձեռնամուխ եղան գործը դատարանին հանձնելուն: Վարչական դատարան Ա.Մ.-ի անունից հայց ներկայացվեց ընդդեմ ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության՝ վիճարկելով ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության որոշումը, որով Ա.Մ.-ն զրկվել էր ավտոմեքենա վարելու իրավունքից մեկ տարի ժամկետով: 23.11.2022թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվեց վարույթ: Փաստաբանները դատարանին նաև միջնորդություն են ներկայացրել՝ կասեցնելու պարեկային ծառայության որոշումը, որը դատարանի կողմից 12.12.2022թ-ի որոշմամբ բավարարվել է: Արդյունքում Ա.Մ.-ի վարորդական իրավունքի վկայականը վերադարձվել է վերջինիս:

Գործով նշանակվել է դատաքննության, առաջին նիստը նշանակվել է 2023թ-ի հունիսի 1-ին:

Նախաքննության ընթացքում գտնվող քրեական գործեր

2023 թվականի փետրվարի 13-ի դրությամբ Կազմակերպության փաստաբանների կողմից վարվում է թվով 10 քրեական գործ, որոնք գտնվում են նախաքննության փուլում ՀՀ քննչական կոմիտեի տարբեր ստորաբաժանումներում:

Նշված թվով 10 քրեական գործերով 10 ԼԳԲՏԻՔ անձինք ունեն տուժողի կարգավիճակ, տուժողի կարգավիճակ ունի նաև «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը և մեկ հոգի ունի մեղադրյալի կարգավիճակ:

Կազմակերպության փաստաբանների գործառույթն է՝ իրականացնել Կազմակերպության շահառուների իրավունքների պաշտպանությունը քննչական մարմիններում, այնուհետև նաև անհրաժեշտության դեպքում՝ ՀՀ դատական ատյաններում:

Քննչական մարմիններում քննվող քրեական գործերը մանրամասն կներկայացվեն ստորև:

1. Ծեծի են ենթարկել տրանսգենդեր կնոջը

Կազմակերպություն է դիմել տրանս կին Ա.Ն.-ն և հայտնել, որ իրեն ծեծի են ենթարկել: Մասնավորապես, 2022 թվականի հունիսի 19-ին, գիշերը ժամը 02:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ փողոցի սկզբնամասում մի խումբ անծանոթ տղամարդիկ, առանց որևէ պատճառի բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության անդամների նկատմամբ, սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել իր և իր ընկերոջ հասցեին և տևական ժամանակ հասարակության անդամների ներկայությամբ բազմաթիվ հարվածներ են հասցրել իրեն, պատճառել ֆիզիկական ցավ և այդ կերպ խախտել հասարակական կարգը:

Նշված դեպքի առթիվ 2022 թվականի օգոստոսի 20-ին ՀՀ ոստիկանության կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է քրեական գործ:

2. Ծեծի են ենթարկել զինվորական ծառայության ընթացքում

Կազմակերպություն դիմած նույնասեռական անձը հայտնել է, որ իրեն խոշտանգել և ծեծի են ենթարկել զինվորական ծառայության ընթացքում, պատերազմական դրության ժամանակ: Պարզվել է, որ 2020 թվականի նոյեմբեր ամսվա սկզբներին ՊԲ 59703 զորամասի 5-րդ գումարտակի հրամանատար, մայոր Տ.Թ.-ի հետ վիճելու համար պատժելու, ինչպես նաև նույնասեռական լինելու հետ կապված նույն ժամանակ ՀՀ ՊՆ Հադրութի ՌՈ Մեխակավանի բաժանմունքի պետ Գ.Լ.-ն Ճարտար քաղաքի հարակից ճանապարհահատվածում սեռական բնույթի հայհոյանքներ է տվել վերոնշյալ գումարտակի 2-րդ ՀՎ-ի 1-ին ջոկի հրամանատար, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Հ.Ա.-ի հասցեին, լիցքավորել է իր մոտ գտնվող ատրճանական ու երկու անգամ կրակել վերջինիս ոտքերի տակ՝ գետնին, այնուհետև լիցքավորված ատրճանակը պահելով վերջինիս ճակատի ուղղությամբ՝ սպառնացել է սպանել, ինչպես նաև ատրճանակի բռնակով հարվածել է Հ.Ա.-ի քթի շրջանին, որից նա վայր է ընկել, մեկ անգամ էլ հարվածել է բռունցքով դեմքին և պատճառել մարմնական վնասվածքներ:

Դրանից հետո Հ.Ա.-ն տեղափոխվել է ՀՀ ՊՆ Ստեփանակերտի ՌՈ ընդունիչ-բաշխիչ բաժին, որտեղ նույն հանգամանքներով պայմանավորված վերջինիս նկատմամբ բռնություն են գործադրել Գ.Լ.-ն ու տվյալ բաժնի աշխատակիցները:

Կազմակերպության փաստաբանի դիմումի հիման վրա վերջինս ներգրավվել է որպես տուժող Հ.Ա.-ի լիազոր ներկայացուցիչ, մասնակցել է քննչական գործողությունների, վարույթն իրականացնող մարմնին ներկայացրել է գործի համար էական նշանակություն ունեցող փաստաղթեր: Ներկայում նախաքննությունը շարունակվում է:

3. Տրանս կնոջ նկատմամբ հնչեցրել են սպանության սպառնալիքներ

Կազմակերպություն է դիմել տրանս անձ Մ-ն և հայտնել, որ մի տղամարդ, ով իր հաճախորդն է, տանից հեռանալուց հետո, վերադարձել է, սկսել է սպառնալիքներ հնչեցնել իր հասցեին, ասել է, որ ձեռքին նռնակ կա, որով սպառնացել է պայթեցնել տրանս կնոջը: Վերջինս անմիջապես զանգահարել է ոստիկանություն, որի արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածով հարուցված քրեական գործով՝ Մ.-ն ճանաչվել է տուժող: Քրեական վարույթի նախաձեռնումից հետո տղամարդու նկատմամբ հայտարարվել է հետախուզում, վերջինս հայտնաբերվել է և տվել է խոստովանական ցուցմունք:

Ներկայում նախաքննությունը ընթացքի մեջ է:

4. Ապօրինի կերպով օգտագործել են «Իրավունքի կողմ» ԻՀԿ պատկանող ապրանքային նշանը և նկարները

2022 թվականի հուլիս ամսին Կազմակերպության նախագահ Լ. Մարտիրոսյանը պատահաբար պարզել է, որ անհայտ անձը Կազմակերպության կայքից ներբեռնել է Կազմակերպությանը պատկանող նկարները և Կազմակերպության լոգոտիպը և դրանք հրապարակել այլ կայքում, առանց Կազմակերպության թույլտվության:

Կազմակերպության նախագահը նշված առիթով ներկայացրել է հաղորդում հանցագործության մասին:

2022 թվականի հուլիսի 14-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով:

2022 թվականի օգոստոսի 18-ին քրեական վարույթը փոխանցվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչություն, իսկ նույն ամսի 22-ին որոշում է կայացվել Կազմակերպությանը ճանաչել որպես տուժող:

16.12.2022 թվականին Կազմակերպության փաստաբանը ներգրավվել է որպես Կազմակերպության լիազոր ներկայացուցիչ և մասնակցել քննիչի կողմից իրականացված քննչական գործողություններին:

Ներկայում նախաքննությունը շարունակվում է:

5. Ծեծի են ենթարկել տրանս անձին և սպառնալիքներ են հնչեցրել ԼԳԲՏԻՔ համայնքի անդամների հասցեին

Կազմակերպություն դիմած տրանս կին Ա.Ն.-ն հայտնել է, որ 2022 թվականի հուլիսի 31-ի երեկոյան Գ. Լուսավորիչ փողոցի վրա գտնվող «Թաբուլե» հյուրանոցի մոտակայքում իրեն է մոտեցել մի անծանոթ երիտասարդ, հարցրել է՝ հայ է, թե ոչ, ու դրանից հետո միանգամից հարվածել է իր շուրթին՝ պատճառելով մարմնական վնասվածք, այնուհետև գցել է գետնին և շարունակել է հարվածներ հասցնել գլխին և մարմնի տարբեր մասերին: Ավելին, այդ ամբողջ ընթացքը բռնարարը տեսանկարահանել էր և ցուցադրել էր սոցիալական ցանցի իր էջերում:

Դրանից հետո նույն անձը «YouTube» սոցիալական ցանցում հրապարակայնորեն բռնության կոչեր և սպանության սպառնալիքներ էր հնչեցրել տրանս անձանց հասցեին, որից հետո պարզվել էր, որ նշված երիտասարդը հանդիսանում է Վ.Ե.-ն, ով հայտնի է որպես ազգայնական ինչ-որ խմբավորման անդամ և պարբերաբար բռնության սպառնալիքներ է հնչեցնում ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ:

Թե՛ Ա.Ն.-ն, թե՛ Կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանն անմիջապես հանցագործության մասին հաղորդումներ ներկայացրեցին ոստիկանությունում:

Ներկայացված հաղորդումների հիման վրա, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով (Սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու կամ խոշոր կամ առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով) և ՀՀ քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչը հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ), ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Քրեական գործով ներգրավվել է կազմակերպության փաստաբանը, ներկայումս կատարվում է նախաքննություն:

6. Գողացել են տրանս անձի բջջային հեռախոսը

Կազմակերպություն դիմած տրանս անձ Ա.Ե.-ն հայտնել է, որ իր հաճախորդը, գտնվելով իր տանը, 2023 թվականի հունվարի 28-ին, օգտվելով իր՝ լոգարանում գտնվելու հանգամանքից, իր տան հյուրասենյակի սեղանի վրայից գաղտնի հափշտակել է իր Այֆոն 13 Պրո Մաքս մոդելի բջջային հեռախոսը, պատճառելով 800.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Ա.Ե.-ի հաղորդման հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 4-րդ մասով, Կազմակերպության փաստաբանը ներգրավվել է քրեական վարույթին որպես տուժող Ա.Ե.-ի լիազոր ներկայացուցիչ:

7. Սեքս աշխատողը ենթարկվել է թրաֆիքինգի

Սեքս աշխատող Ջ.Ն.-ն, դիմելով Կազմակերպություն, հայտնել է, որ իրեն փորձել են թրաֆիքինգի ենթարկել, մասնավորապես՝ 2022 թվականի նոյեմբերից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում իր ծանոթներից մեկից վերցրել է պարտքով գումար, ոսկյա զարդեր, որը չի կարողացել միանգամից վճարել: Ծանոթը առաջարկել է, որպեսզի նրա իսկ վարձակալած բնակարանում Ջ.Ն.-ն զբաղվի սեքս աշխատանքով և դրանից գոյացած գումարները պարտքի տեղ հանձնի նրան: Ջ.Ն.-ն ստիպված համաձայնել է դրան և որոշ ժամանակ զբաղվել է սեքս աշխատանքով և ստացված գումարները փոխանցել է իր ծանոթին: Սակայն, տեսնելով, որ իր պարտքի գումարները չեն նվազում, Ջ.Ն.-ն ստիպված դիմել է Կազմակերպությանը, ինչպես նաև ոստիկանություն: Արդյունքում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների քննչական բաժնում, ընթանում է նախաքննություն:

8. Տրանս անձը մեղադրվում է պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու մեջ

Տրանս անձը դիմել է Կազմակերպություն և հայտնել, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող քրեական գործով իրեն մեղադրանք են առաջադրել այն բանի համար, որ ինքը վարձակալել է բնակարան և իբրև թե գումարի դիմաց այդ բնակարանը տրամադրել է սեքս աշխատողների և նրանց մատուցած ծառայությունների դիմաց յուրաքանչյուրից ստացել է 5,000 ական ՀՀ դրամ:

Կազմակերպության փաստաբանը, ներգրավվելով սույն վարույթին, ծանոթանալով քրեական վարույթի նյութերին, պարզեց, որ մեղադրանքն ամբողջությամբ անհիմն է և ձեռնամուխ եղավ տրանս անձ Մ.-ի պաշտպանությանը:

Նախաքննության ընթացքում փաստաբանը մասնակցեց կազմակերպված բոլոր քննչական և դատավարական գործողություններին, ներկայացրեց միջնորդություններ Մ.-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

Արդյունքում՝ ներկայացված միջնորդությունների շնորհիվ գործը հսկող դատախազը ներկա պահին հրաժարվել է գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել դատարան, նախաքննությունը շարունակվում է:

Կազմակերպությունը վստահ է, որ Մ.-ի նկատմամբ ներկայացված մեղադրանքն անհիմն է և վերջիվերջո այն դադարեցվելու է:

9. Բռնություն տրանս անձի նկատմամբ

2021 թվականի հունիսի 12-ին Դ.-ն, ով տրանս անձ է, բռնության է ենթարկվել իր նախկին ընկերոջ կողմից: Դ.-ին տեսնելու պատրվակով վերջինս զանգահարել է նրան և այցելել Դ.-ի բնակարան: Հասնելով բնակարան՝ Դ.-ի նախկին ընկերը և նրա հետ եկած անձը հրահրել են վեճ, հնչեցրել սպառնալիքներ և դրանից հետո ծեծի են ենթարկել Դ.-ին, վերջինս ստացել է բազմաթիվ մարմնական վնասվածքներ, այդ թվում՝ քթի կոտրվածք:

Դ.-ին հաջողվել է զանգահարել շտապօգնություն և ժամանած շտապ օգնության բժիշկները տեղափոխել են նրան հիվանդանոց, որտեղից և ահազանգել են ոստիկանություն:

Դ.-ին տրվել է դատաբժշկական ուղեգիր, հաստատվել է վնասվածքների առկայությունը և հարուցվել է քրեական գործ:

Սույն դեպքը վկայում է առ այսօր տրանս և ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքի մասին: Ավելին, նման վերաբերմունքը փոխակերպվել է ծեծի և բռնության, և Կազմակերպությունը հետամուտ է լինելու, որպեսզի մեղավորները պատժվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Սեքս աշխատողները ենթարկվել են թրաֆիքինգի

2021 թվականին Կազմակերպություն դիմած սեքս աշխատողները հայտնել են, որ ոմն Ա.Կ.-ի կողմից պարբերաբար ենթարկվել են ծեծի, բռնության, թրաֆիքինգի: Մասնավորապես, Ա.Կ.-ն, օգտվելով իրենց խոցելի վիճակից, շուկայականից բարձր գներով իրենց է վաճառել ոսկյա զարդեր, հագուստ, որից հետո, չկարողանալով վճարել Ա .Կ.-ի գումարները, վերջինս նրանց ստիպել է զբաղվել սեքս աշխատանքով և դրանից ստացված գումարները Ա.Կ.-ն վերցրել է ՝ այդպիսով նրանց դնելով շահագործման վիճակի մեջ:

Կազմակերպության փաստաբանի ջանքերով ներկայացված հաղորդման հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ թրաֆիքինգի հատկանիշներով: Տեսնելով, որ նախաքննությունը նշված բաժնում ընթանում է թերի, փաստաբանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին ուղղված միջնորդությունից հետո նշված քրեական գործը տեղափոխվել է ՀՀ քննչական կոմիտեի Մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչություն:

Իրականացված լայնածավալ քննչական գործողությունների արդյունքում Ա.Կ.-ի նկատմամբ ներկայացվել է մեղադրանք և վերջինս երկու ամսով կալանավորվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից:

Ներկայումս նախաքննությունը շարունակվում է: Սույն գործով 3 սեքս աշխատող ճանաչված է տուժող, և Կազմակերպությունը ներկայացնում է վերջիններիս շահերը:

Կազմակերպության հետագա ծրագրային քայլերի ռազմավարություն

1. Անձնագրում սեռի փոփոխության գրանցում

Կազմակերպության առաջիկա ուղղություններից մեկը լինելու է անձնագրում սեռի փոփոխության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների իրականացումը:

Այդ առումով, առանցքային նշանակություն ունի արդեն իսկ սույն հետազոտության մեջ մանրամասն նկարագրված ռազմավարական դատավարության գործը, Կ.Ա.-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, որը գտնվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Նշված դիմումը բավարարելու դեպքում, այն հնարավորություն կտա օրենսդրական կարգավորումների միջոցով սահմանել և հստակեցնել ՀՀ-ում անձնագրում սեռի փոփոխության գրանցումը:

16.05.2021թ.-ին ուժը կորցրած է ճանաչվել Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին օրենքը և 16.05.2021թ.-ին ուժի մեջ է մտել նոր օրենքը, որտեղ հանվել են սեռափոխության մասին նախկին օրենքում գործող կարգավորումները, մասնավորապես, նախկին օրենքում 70-րդ հոդվածը սահմանում էր, որ Քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու մասին ՔԿԱԳ մարմնի եզրակացությունը կազմվում է մասնավորապես հետևյալ դեպքերում, երբ `

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական կազմակերպությունը տվել է սեռի փոփոխության մասին սահմանված ձևի փաստաթուղթ:

Այսինքն, եթե անձը ցանկանում է փոփոխություն կատարել քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ (սեռի մասին գրառման փոփոխություն), նա պետք է՝

1. Իրականացնի սեռափոխություն:
2. Ներկայացնի ՀՀ օրենսդրությաբ սահմանված կարգով բժշկական կազմակերպության կողմից տրված սեռի փոփոխության մասին փաստաթուղթ:

Ներկայումս, գործում է միայն արդարադատության նախարարի 13.05.2020թ. թիվ 170 Ն հրամանը, որտեղ նշված է, որ Օրենքի 70-րդ հոդվածով սահմանված՝ քաղաքացիական կացության ակտերի գրառումներում փոփոխություն կատարելու մասին եզրակացությունը ՔԿԱԳ մարմինը կազմում է, եթե՝

անձը ում նկատմամբ կազմվել է քաղաքացիական կացության ակտը, կատարել է սեռի փոփոխություն: Այսինքն, սույն նորմը հղում է տալիս նախկին գործող օրենքին:

Այսպիսով, ներկա օրենքի կարգավորումները որևէ դրույթ չեն պարունակում սեռափոխության դեպքում ՔԿԱԳ ակտերում փոփոխություն կատարելու պայմաններին:

Որոշակի առումով ներկայում գործող օրենքով մեր կարծիքով կարգավորումը նախատեսվում է 66-րդ հոդվածի 3-րդ մասով, ըստ որի՝ Քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ փոփոխություն կատարելու հիմքերն են՝ այլ քաղաքացիական կացության ակտային գրանցման կամ իրավասու այլ մարմնի ընդունած (տրամադրած) փաստաթղթի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու նաև կազմված քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ:

Այսպիսով, «Քաղաքացիական կացության գրանցման մասին» նոր օրենքի ընդունմամբ սեռափոխության դեպքում քաղաքացիական կացության ակտում փոփոխություն կատարելու պահանջները հստակ չեն, սահմանված չեն անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու կարգավորումները:

Հաշվի առնելով Կազմակերպության կողմից ներկայացված բողոքը ՄԻԵԴ ու նկատի ունենալով օրենսդրական բացերը՝ Կազմակերպությունը պլանավորում է առաջիկայում ակտիվ աշխատանք տանելու օրենքում նշված օրենսդրական բացերը շտկելու ուղղությամբ և ներկայացնելու է համապատասխան առաջարկություններ:

2.ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ խտրականության արգելքի օրենսդրական բացակայության հիմնախնդիրներ

Հայաստանում և աշխարհում ճանաչվում են ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ խտրականության երկու հիմնական «նշաններ».

- Խտրականություն «գենդերային ինքնության» հիման վրա:
- Խտրականություն «սեռական կողմնորոշվածության» հիման վրա:

Հայաստանի օրենսդրությունը կոնկրետ չի սահմանում խտրականության արգելք ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ, սակայն տարածում է այն տարբեր սոցիալական խմբերի վրա, ինչը տվյալ դեպքում կարող է կիրառվել: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը սահմանում է, որ խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Այնուամենայնիվ, թեև Հայաստանը ընդունում է 2008 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի՝ սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության մասին հռչակագիրը, ԼԳԲՏԻՔ անձանց խտրականությունից պաշտպանող օրենսդրություն չկա:

Գոյություն ունեն մի շարք միջազգային պայմանագրեր, որոնք ապահովում են մարդկանց իրավունքների պաշտպանությունը, այդ թվում նաև՝ ԼԳԲՏԻՔ անձանց, դրանք են.

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր,
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր,
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիա,
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա:

Հայաստանը միացել է այս բոլոր միջազգային պայմանագրերին և համաձայն ՀՀ սահմանադրության, դրանք հանդիսանում են ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը:

Հայաստանի Հանրապետությունը, լինելով ՄԱԿ անդամ պետություն և ստորագրելով նշված կոնվենցիաները, պարտավոր է հետևել դրանց կատարմանը և ապահովել խտրականության բացառումը որևէ սոցիալական խմբի նկատմամբ: Իսկ ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով հասարակությունում առկա անհանդուրժող վերաբերմունքը ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ, անհրաժեշտ է ազգային մակարդակով մի շարք օրենսդրական նախաձեռնությունների միջոցով ապահովել ԼԳԲՏԻՔ անձանց իրավունքների իրացումը:

Մասնավորապես, այս համատեքստում, անչափ հիշարժան է Կազմակերպության գրանցած հաղթանակը 2021 թվականին:

Մասնավորապես, տրանսգենդեր Ն.Ա.-ն և Մ.Ս.-ն, ինչպես նաև նույնասեռական Մ.Ե.-ն 2018 թ. հունիս-օգոստոսի ամիսներին հաճախել են Երևանի քաղաքի Կորյունի 21 հասցեում գտնվող և ԱՁ Լիանա Սաֆարյանի կողմից շահագործվող «Մալի» սպորտային ակումբ:

2018 թ. օգոստոս ամսին Լիանա Սաֆարյանը հայտնել է, որ նրանք այլևս չեն կարող այցելել իր սպորտային ակումբ մարզվելու, քանի որ նրանք տրանսգենդեր անձինք են և արգելվում է վերջիններիս մուտքն այդ ակումբ:

2018 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից Լիանա Սաֆարյանին ուղարկվել են նամակներ, որոնցով խնդրվել է հայտնել սպորտային ակումբ մարզվել արգելելու հիմքերը, սակայն վերջինս տարբեր պատճառաբանություններով հրաժարվել է հայտնել արգելքի իրավական հիմքերը:

Դրանից հետո «Իրավունքի կողմ» ԻՀԿ փաստաբանը դիմել է դատարան, խնդրելով ճանաչել տրանսգենդեր և նույնասեռական անձանց իրավունքների խախտումը խտրականության հիմքով:

Շուրջ երկուսուկես տարի տևած դատական գործընթացից հետո, 18.03.2021թ.-ին դատարանը կայացրեց արդարացի դատական ակտ, ճանաչելով Ն.Ա.-ի, Մ.Ս.-ի և Մ.Ե.-ի իրավունքների խախտումը խտրականության հիմքով[4]:

---

[4]Տես՝
HTTP://RIGHTSIDENGO.COM/HY/NEWS/%D5%AD%D5%B-F%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%AB%D5%B4%D6%84%D5%B8%D5%BE-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AD/:

Վճռում, դատարանը մասնավորապես նշել է, որ. «Գործի առանձնահատուկ փաստերով հիմնավորվել է, որ Հայցվորներն արժանացել են խտրական վերաբերմունքի, քանի որ մյուս հաճախորդների հետ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում վերջիններիս նկատմամբ դրսևորվել է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվել են ակումբ այցելելու և Պատասխանողի հետ կնքված ծառայությունների մատուցման գործարքից ծագող իրավունքներից: Հետևաբար Դատարանը եկել է այն հետևության, որ գործով ապացուցվել են նաև բացառապես սեռական կողմնորոշվածությամբ և (կամ) գենդերային ինքնությամբ պայմանավորված Պատասխանողի կողմից Հայցվորների իրավունքների խախտման, բացառապես խտրականության հիմքով «Մալի սպորտային ակումբ»-ի ծառայություններից օգտվելը Հայցվորներին արգելելու փաստերը»:

Սույն դատական հաղթանակի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ Հայաստանի Սահմանադրությունը կամ այլ օրենսդրական ակտեր կոնկրետ նշում չեն պարունակում գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշվածության պատճառով խտրականության արգելքի մասին:

Հետևաբար, կրկնակի ուրախալի է, որ Կազակերպության ջանքերով հաջողվեց Հայաստանի դատարանում հասնել նախադեպային վճռի ԼԳԲՏԻՔ անձանց իրավունքների խախտման ճանաչման գործում՝ խտրականության հիմքով:

Ուժի մեջ մտած վճիռը թույլ կտա հետագայում նմանատիպ դեպքերում հղում կատարել դատական ակտին և դատարանի հիմնավորումներին, ինչպես նաև այն օգտագործել օրենսդրական բարեփոխումներ առաջ մղելու համար:

Այսպիսով, առաջիկայում Կազմակերպությունը, օգտագործելով նշված՝ ուժի մեջ մտած դատական ակտը, պլանավորում է առաջ մղել օրենսդրական մակարդակում ԼԳԲՏԻՔ անձանց նկատմամբ խտրականության արգելումը՝ իրենց գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշվածության հիմքով:

ՄԱՍ II

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
«ՏԱՆՍԳԵՆԴԵՐ ԼԳԲԻՔ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՅԼ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

2021 հուլիս – 2022 դեկտեմբեր

2.1 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՅԼ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՅԱՍՏԱՆՈՒՄ

Սեռական կողմնորոշվածությունն ու գենդերային ինքնությունը շարունակում են չափազանց վիճահարույց խնդիրներ մնալ նաև Հայաստանում:[5] Հոմոֆոբիան, տրանսֆոբիան համատարած և խորապես արմատավորված են հայ հասարակության մեջ: Հասարակության վերաբերմունքը տրանսգենդեր, լեսբի, գեյ, բիսեքսուալ, ինտերսեքս և սեռական այլ կողմնորոշվածություն ունեցող անձանց հանդեպ անհանդուրժող է, և հասարակության համար նման անձինք «անընդունելի» են, որակվում են որպես՝ «մեր ազգային ավանդույթներին հակասող»: Ուստի այդ անձինք շարունակում են հասարակության գրեթե բոլոր ոլորտներում բախվել իրենց իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիման վրա խտրական, անհանդուրժող վերաբերմունքի, ատելության:

Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձինք, ինչպես նաև նրանց իրավունքների պաշտպանությամբ և գենդերային հավասարության խթանմամբ զբաղվող իրավապաշտպանները իրենց գործունեության արդյունքում հաճախ են դառնում ատելության խոսքի, բռնությունների և հարձակումների թիրախ՝ հանրային դեմքերի, պաշտոնյաների, ազգայնամոլների կողմից: Իրավասու մարմինների արձագանքը Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց և իրավապաշտպանների նկատմամբ նմանատիպ հարձակումների վերաբերյալ ոչ միշտ է համարժեք և օբյեկտիվ:

Միջազգային կառույցները շարունակաբար գործողություններ են կատարում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի բռնությունների կանխարգելման և դատապարտման ուղղությամբ, միաժամանակ խթանելով նրանց համար հավասար հնարավորությունների հասանելիություն՝ կյանքի բոլոր ասպարեզներում: Ուստի մեր օրերում խտրական օրենքների, քաղաքականությունների և գործելակերպի, այդ թվում՝ նույնասեռ փոխհամաձայնեցված հարաբերությունների քրեականացման նկատմամբ պայքարը կաևոր է ամբողջ աշխարհում:

Մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային, ազգային, միջազգային կոնվենցիոն և իրավապաշտպան մարմինները մշտապես կարևորել են ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարը, քանի որ ատելության հիմքով հանցագործությունը ոչ թե իրավախախտում է ուղղված տուժողի անձի, այլև՝ համայնքի դեմ, և բացի մարդու հիմնարար իրավունքների խախտումներից, ենթադրում է նաև պետության անվտանգությանն ուղղված լուրջ մարտահրավեր:

Որպես Եվրոպայի խորհրդի Անդամ պետություն՝ Հայաստանը միջազգային պարտավորություն ունի ստեղծելու խտրական գործելակերպի դեմ պայքարի արդյունավետ իրավական դաշտ և իրավական պաշտպանության մեխանիզմներ: Այդ պարտավորությունը ներառում է, մասնավորապես, ատելության հիմքով կատարվող

[5]«Սեռական կողմնորոշվածությունը վերաբերում է յուրաքանչյուր անձի խորը զգացական, զգացմունքային և սեռական գրավչության կարողությանը և տարբեր կամ միևնույն կամ մեկից ավելի գենդերի անհատների հետ ինտիմ ու սեռական հարաբերություններին», Սեռական կողմնորոշվածության և գենդերային նույնականացման վերաբերյալ մարդու իրավունքների միջազգային իրավական նորմերի կիրառման Յոգյակարտյան սկզբունքներ:

հանցագործություններին վերաբերող տվյալների հավաքման և մշակման այնպիսի արդյունավետ մեխանիզմներ ունենալու պարտավորությունը, որոնք ի զորու են բացահայտել ոչ միայն այդ հանցագործությունների թիվը, այլև ատելության հիմքով կատարվող հանցագործություն ներառող խտրական գործելակերպի միտումները:

Հայաստանը չի իրագործել արդյունավետ միջոցառումներ խտրականության դեմ պայքարի իր օրենսդրությունը և պրակտիկան բարեփոխելու և եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Չնայած օրենքների բարեփոխման ուղղությամբ անցյալում ձեռնարկված քայլերին՝ երկիրը դեռևս չի ընդունել խտրականության դեմ պայքարի առանձին օրենք, այլ փոխարենը պարբերաբար օրենքները վերանայվում են, խտրականությունը արգելող կոնկրետ հոդվածներ են ավելանում, որոնք արգելում են խտրականությունը լայն իմաստով:

Հայաստանի օրենսդրությունը սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիման վրա խտրականությունը կանխարգելող մարդու իրավունքների միջազգային և եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նախնական փորձերը հասարակության կրոնական և պահպանողական խմբերի մոտ աղմկահարույց դիմադրության են արժանանում:

Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների մասին օրենքը («գենդերի մասին օրենքը») արդյունավետորեն կյանքի չի կոչվել, քանի որ հասարակությունում դեռևս պահպանվում են խորարմատ կարծրատիպեր՝ կապված հավասարության տարբեր դրսևորումների և խտրականության բացառման սկզբունքի հետ: Դա ներառում է, նաև, իրավակիրառողների շրջանում փորձի և գիտելիքի պակասը, որն անհրաժեշտ է խտրական շարժառիթներով տեղի ունեցած գործերով զբաղվելու համար, ինչպես նաև՝ արդյունավետ փոխհատուցումն ապահովելու նպատակով՝ խտրական շարժառիթների գոյությունն արձանագրելու համար: Քրեական օրենսգիրքը չի պարունակում խտրականության շարժառիթներով կատարված հանցագործությունների դեմ պայքարի համար անհրաժեշտ կարևորագույն նյութաիրավական հիմքերը: Քրեական օրենսգիրքը խտրականության՝ որպես ատելության շարժառիթների տարրերիի չափազանց նեղ հիմքեր է նախատեսում: Քրեական գործերով զբաղվող քննիչները, դատախազները և դատավորները հաճախ չեն տիրապետում խտրականության բացառման կարևորագույն սկզբունքներին վերաբերող նվազագույն գիտելիքին:[6]

[6]Մանրամասն տե՛ս՝ «Խտրականությունը, ատելության հանցագործությունները և ատելության խոսքը Հայաստանում. տվյալների հավաքագրում», Իրավիճակի վերլուծության զեկույց, Արա Ղազարյան, 2019թ.:

Մարդու իրավունքների միջազգային և եվրոպական օրենսդրությունն արգելում է խտրականությունը, այն է՝ անձի հանդեպ օրենքի շրջանակներում կամ գործնականում ցուցաբերված տարբերակված վերաբերմունք, որը խանգարում կամ բացառում է նրա իրավունքների կիրառումը՝ հիմք ընդունելով այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են էթնիկ ծագումը, կրոնը, սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը: Հայաստանը՝ որպես Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) և Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի (ՏՍՄԻՄԴ) մասնակից պետություն, ի թիվս այլ միջազգային և եվրոպական պայմանագրերի, պարտավոր է բոլոր անձանց համար երաշխավորել հավասար վերաբերմունք և խտրականության բացառում: Մասնավորապես, նշված դաշնագրերի համաձայն՝ *«Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք, այդ առնչությամբ որևէ կարգի խտրականություն պետք է արգելվի օրենքով, և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից, ըստ որևէ հատկանիշի, այն է՝ ըստ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծնողի կամ այլ հանգամանքի»*[7]:

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը, որը վերաբերում է *խտրականության արգելքին, սահմանում է «Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»*.[8] Ո՛չ ՀՀ սահմանադրությունը, ո՛չ էլ այլ ներպետական օրենսդրական ակտերը չունեն սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիման վրա խտրականությունն արգելող կոնկրետ դրույթներ, ուստի սահմանադրական նման ընդգրկուն ձևակերպումը կարող է ներառել այդ հիմքերը, մասնավորապես՝ օրենքներում դրանց արտացոլումը հնարավոր դարձնելու տեսանկյունից: Հարկ է նշել, որ Հայաստանը վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 12 արձանագրությունը, որով լրացվում է խտրականության ընդհանուր արգելքի վերոհիշյալ սահմանադրական սկզբունքը:

---

[7] Տես՝ UN General Assembly, International Covenant on Civil and Political Rights, 16 December 1966, United Nations, Treaty Series, vol. 999, p. 171, available at: http://www.refworld.org/docid/3ae6b3aa0.html [accessed 31 October 2016]

[8] Տես՝ ՀՀ սահմանադրություն՝ 2015 թվականի փոփոխություններով:

Սահմանադրության 77-րդ հոդվածով[8] նախատեսվում է հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը, որն իրականում հավասարազոր է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 17-րդ հոդվածում[10] ամրագրված սկզբունքին, որով արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, էթնիկ, ռասայական, ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով: Ատելության հիմքով կատարվող հանցագործությունները և ատելության խոսքն արգելող սահմանադրական դրույթը փաստացի սա է:[11]

Այդուհանդերձ, Հայաստանում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձինք շարունակում են հետապնդումների, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների ենթարկվել ընտանիքում, աշխատավայրում, կրթական հաստատություններում, իրավապահ մարմիններում, զինված ուժերում, առողջապահության ոլորտում, հասարակական և այլ վայրերում: Այս անհանդուրժող վերաբերմունքը պայմանավորված է նաև սեռական կողմնորոշվածության, գենդերային ինքնության, սեռականության հարցերի վերաբերյալ հասարակության տեղեկատվության սահմանափակմամբ և գիտելիքի բացակայությամբ: Հասարակության այն հատվածը, որը ականատես է լինում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ իրականացված իրավունքների ոտնահարումներին, ճնշումներին, ծաղրին՝ անտարբերություն է ցուցաբերում:[12]

Ոստիկանությունը, գլխավոր դատախազությունը, քննչական մարմինները և մարդու իրավունքների պաշտպանը պարբերական զեկույցներ են հրապարակում հանցագործությունների և մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ: Այնուհանդերձ, նրանցից ոչ մեկը չի հավաքում և չի մշակում հանցագործությունների տեսակավորված տվյալներ՝ կոնկրետ ատելության հիմքով հանցագործությունների և ատելությամբ պայմանավորված հանցագործությունների վերաբերյալ: Թվարկված բոլոր գերատեսչությունները տվյալները մշակում են ըստ ձևավորված ընդհանուր պրակտիկայի, որի պարագայում հանցագործության տեսակը սահմանվում է ըստ Քրեական օրենսգրքի ընդհանուր հոդվածի՝ չհստակեցնելով հոդվածների մասերը կամ կետերը, որոնցով էլ հաճախ սահմանված են լինում հանցակազմի այնպիսի ծանրացնող դրսևորումները, ինչպիսիք են ատելության շարժառիթները: Այդ մոտեցման հետևանքն այն է, որ հանցագործությունների վիճակագրությունը մանրակրկիտ տվյալներ չի պարունակում ատելության հողի վրա կատարված հանցագործությունների մասին:

---

[8]Տես՝ ՀՀ սահմանադրության հոդված 77. Արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

[10]Հոդված 17. Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:

[11]Տես՝ «Խտրականությունը, ատելության հանցագործությունները և ատելության խոսքը Հայաստանում. տվյալների հավաքագրում», Իրավիճակի վերլուծության զեկույց, Արա Ղազարյան, 2019թ.:

[12]Սա է վկայում նաև սույն զեկույցի շրջանակներում հարցվածների այն պատասխանները, որոնք վերաբերում էին ականատեսների և միջադեպին նրանց արձագանքին, հետազոտության մասնակիցները հիմնականում պատասխանել են, որ ականատեսները փորձել են չխառնվել, քանի որ ունեցել են վախ, անտարբերություն: Այն ականատեսները, ովքեր եղել են համայնքի ներկայացուցիչներ, կա՛մ վախեցել են խառնվել, որ իրենք էլ չթիրախավորվեն, կա՛մ՝ միջամտել են և հայտնվել են տուժողի կարգավիճակում:

Դրանում սովորաբար նշվում է բուն հանցագործությունը (օրինակ՝ սպանություն), սակայն չեն հստակեցվում ծանրացնող դրսևորումները, որոնք սովորաբար նախատեսված են լինում հոդվածի առանձին մասերի առանձին կետերում (օրինակ՝ ազգային ատելության շարժառիթը):

Պետք է փաստենք, որ հասարակության անհանդուրժողականությունն առավել հաճախ արտահայտվում է ծաղրով, վիրավորական արտահայտություններով, հայհոյանքներով, արհամարհանքներով, և այլն: Հետազոտությամբ պարզ է դարձել, որ առավել հաճախ խտրականության են ենթարկվում տղամարդ նույնասեռական անձինք, քան կին նույնասեռական անձինք, և ամենաշատը քննադատվում, ծաղր ու ծանակի ենթարկվում, թիրախավորվում են տղամարդկանց կողմից, քան՝ կանանց: Տղամարդ նույնասեռական անձանց հանդեպ անհանդուրժողականությունը չի սահմանափակվում միայն տհաճ արտահայտություններով, ծաղրով, հայհոյանքներով, այլև նրանց նկատմամբ կիրառվում է ֆիզիկական բռնություն:

Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձինք գրեթե չեն դիմում իրավապահ մարմիններին՝ պատճառաբանությամբ, որ չեն վստահում նրանց, այդ մարմիններն արդյունավետ չեն աշխատում, ունեն ենթադրություններ, որ ոստիկանության աշխատակիցներն իրենց գործերը քննվում են ոչ օբյեկտիվ, արժանանում են վատ վերաբերմունքի, ծաղրի, արհամարանքի, ունեն մտավախություն, որ իրենց մասին տվյալները կարող են հրապարակվել վերջիններիս կողմից, հնարավոր է հանցավորը վրեժխնդիր լինի, և այլն: Հետևաբար Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձինք հանցագործության զոհի կարգավիճակում լինելիս նախընտրում են դիմել իրենց խնդիրներով և իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների, կամ պատմել, կիսվել ընկերների հետ:

2.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպանական հասարակական կազմակերպությունը 2021թ-ի հուլիսից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում և 2022թ-ի ընթացքում իրականացրել է «Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններ և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումներ Հայաստանում» հետազոտությունը, որի նպատակն է ուսումնասիրել Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելության խոսքի մասին տվյալների հավաքագրման և մշակման իրավական համակարգի և մեխանիզմների ներկայիս վիճակը Հայաստանում:

Հետազոտությունը հնարավորություն է տվել ընդհանուր պատկեր կազմել Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ատելության հիմքով կատարվող իրավախախտումների տեսակների, դրանց հաճախականության և կանոնավորության վերաբերյալ, ինչպես նաև բացահայտել հանցավորի կողմից ատելության հիմքով հանցագործությունների և այլ իրավախախտումների շարժառիթները, դրդապատճառները, զոհի ֆիզիկական, զգացմունքային և հոգեբանական հետևանքները:

Իրավիճակի սույն վերլուծությունը կատարվել է օրենքների, զեկույցների հետազոտության և վերլուծության, ինչպես նաև դեմառդեմ հարցազրույցների միջոցով: Հարցազրույցները, փաստաթղթերի հետազոտությունը և վերլուծությունն օգնել են հետազոտողին ներկայացնել համապարփակ վերլուծություն տիրող իրավիճակի վերաբերյալ:

Հետազոտությանը մասնակցել են 16 և բարձր տարիքի ինչպես Տրանսգենդեր, ԼԳԲԻՔ, այնպես էլ այլ գենդերային ինքնություն ունեցող անձինք, ովքեր եղել են ատելության հիմքով հանցագործությունների զոհ կամ ականատես:

Հարցվածները նշել են դեպքեր, որոնք պատահել են իրենց հետ անմիջականորեն կամ որոնց ականատեսն են եղել: Հետազոտության մեջ ընդգրկվել են ԼԳԲՏԻՔ անձանց կողմից ներկայացված 56 դեպքեր, որոնք տեղի են ունեցել 2021 թվականի հուլիսից մինչև 2022 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում:

Հետազոտության ընթացքում հարցումները կատարվել են անանուն, ինչը նպատակ է ունեցել «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի կողմից ապահովելու հարցվածների ինքնության տվյալների գաղտնիությունը:

Սույն հետազոտության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը հիմնվում է հետազոտությունն անցկացնող աշխատանքային թիմի հետ անցկացված քննարկումների և հետազոտական աշխատանքների ամփոփ արդյունքների վրա (տե՛ս աղյուսակ 1.): Հետազոտության շրջանակներում ամփոփվել և վերլուծվել են ատելության հիմքով հանցագործությունների դեպքերը, որոնք հնարավորություն են տվել հստակեցնել, դասակարգել, խմբավորել տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ հանցագործությունների իրականացման շարժառիթները, հանցագործության իրականացման ժամանակահատվածը, դեպքի վայրը և այլ ցուցիչներ:

Աղյուսակ 1. Հետազոտության համառոտ նկարագրությունը

Հետազոտության անվանումը	Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններ և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումներ Հայաստանում
Հետազոտության ժամանակահատվածը	Հետազոտությունն իրականացվել է 2021 թվականի հուլիս ամսից մինչև 2022 դեկտեմբերն ընկած ժամանահատվածում
Հետազոտության աշխարհագրական ծածկույթը	Մայրաքաղաք Երևան և ՀՀ մարզեր
Հետազոտության թիրախային խումբը	Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձինք
Ընտրանքը	Հարցումները կատարվել են ԻԿ ԻՀԿ շահառուների, համայնքի անդամների շրջանում՝ անմիջական հարցումների միջոցով

«Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններ և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումներ Հայաստանում» հետազոտությանը մասնակցած անձանց ներկայացրած և ուսումնասիրված **56 (100%) դեպքերն ունեն** ատելության հիմքով հանցագործության զոհերի և ականատեսների հետևյալ բաշխվածությունը (տե՛ս աղյուսակ 2.) և սոցիալ բնութագրիչները (տե՛ս աղյուսակ 3.):

Աղյուսակ 2. Հանցագործության զոհերի և ականատեսների բաշխվածությունը



Աղյուսակ 3. Հետազոտության մասնակիցների սոցիալ բնութագրիչները

Սոցիալ բնութագրիչներ	Ընդամենը, մարդ (N)	Ընդամենը (%)
Տարիք		
▸ 16-22	37	
▸ 23-26	3	
▸ 27-30	5	
▸ 31-34	8	
▸ 35-44	3	
Ընդամենը	***56***	***100***
Գենդեր ու գենդերային ինքնություն		
▸ Տղամարդ	12	
▸ Կին	16	
▸ Տրանսգենդեր տղամարդ	3	
▸ Տրանսգենդեր կին	10	
▸ Տրանսգենդեր	2	
▸ Ինտերսեքս	8	
▸ Ագենդեր	1	
▸ Ոչ բինար	1	
▸ Բիսեքսուալ	1	
▸ Չգիտի	2	
Ընդամենը	***56***	***100***
Սեռական կողմնորոշվածություն		
▸ Գեյ	23	
▸ Բիսեքսուալ	11	
▸ Հետերոսեքսուալ	4	
▸ Լեսբի	4	
▸ Պանսեքսուալ	2	
▸ Տրանսգենդեր կին	3	
▸ Տրանսեքսուալ	3	
▸ Չի պատասխանել	6	
Ընդամենը	**56**	**100**

Հետազոտության մասնակիցները այն հարցին, թե որքանով են մարդիկ տեղյակ իրենց սեռական կողմնորոշվածությունից կամ գենդերային ինքնությունից, պատասխանել են հետևյալ կերպ (տե՛ս աղյուսակ 4.), ընդ որում, հնարավորություն են ունեցել ընտրելու մեկից ավելի պատասխաններ:

Աղյուսակ 4. Որքանո՞վ են մարդիկ տեղյակ հետազոտության մասնակիցների սեռական կողմնորոշվածությունից կամ գենդերային ինքնությունից

	Ընդամենը, մարդ (N)	Ընդամենը (%)
▸ Ողջ ընտանիքը գիտի	12	21,4
▸ Միայն ծնողը/ծնողները գիտեն	7	12,5
▸ Միայն եղբայրները/քույրերը գիտեն	20	35,7
▸ Ընկերները գիտեն	43	76,8
▸ ԼԳԲՏԻՔ համայնքում տեղյակ են	41	73,2
▸ Աշխատավայրում տեղյակ են	13	33,9
▸ Ոչ ոք չգիտի	1	1,8
▸ Չեն ցանկանում պատասխանել	3	5,4
▸ Բոլորը գիտեն	3	5,4
▸ Ամբողջ շրջապատը գիտի	1	1,8
▸ Ընկերներից քչերը գիտեն	1	1,8

Դեպքերի մեծամասնությունը՝ 22 (39,3 %) դեպք տեղի է ունեցել զոհի տանը, ուսումնական հաստատությունում (դպրոց, քոլեջ)՝ 6 (10,7 %), աշխատավայրում՝ 6 (10,7 %), այգում՝ 5 (8,9 %), համացանցով՝ 3 (5,4 %), իսկ մնացած 14 (25%) դեպքերը՝ հասարակական այլ վայրերում (այգի, կանգառ, և այլն):

Ներկայացված դեպքերից 53-ը կատարվել են Երևանում, իսկ մնացած երեքը՝ մարզերում:

Դեպքերը տեղի են ունեցել ինչպես օրվա ընթացքում, այնպես էլ գիշերը (տե՛ս Գծապատկեր 5.):

Գծապատկեր 5. Ո՞ր ժամին է դեպքը տեղի ունեցել

Դեպքերից 37-ի (66,1 %) ժամանակ իրավախախտները եղել են երկու և ավելի անձինք, իսկ 19 (33,9 %) դեպքով իրավախախտը եղել է մենակ:

Հետազոտության ընթացքում դիտարկված 56 իրավախախտման դեպքերից 11-ը (19,6%) տեղի է ունեցել 2021թ-ի հուլիսից դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում, իսկ մնացած 45 դեպքը (80,4%)՝ 2022թ-ի ընթացքում:

2.3 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ՝ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ

Ատելության հիմքով հանցագործությունները բռնի գործողություններ են մարդկանց, գույքի կամ կազմակերպությունների դեմ՝ այն սոցիալական խմբի պատկանելիության պատճառով, որին հարում են կամ որոնց հետ նույնականանում են:[13]

Ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ վիճակագրությունը Հայաստանում բացակայում է, հոգեբանական հետազոտությունները նույնպես բավականին նոր են: Այնուամենայնիվ, որոշ հետազոտություններից կարելի է պատկերացումներ կազմել իրական կամ ենթադրյալ հանցագործությունների պատճառների մասին՝ անձի ռասայով, կրոնով, էթնիկ պատկանելությամբ կամ ազգային ծագմամբ, սեռական կողմնորոշվածությամբ, հաշմանդամության կամ սեռի տարբերություններով պայմանավորված:

Հայաստանում Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործություններ և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների հետազոտության ընթացքում ներկայացված դեպքերը կարելի է դասակարգել և՛ որպես քրեորեն պատժելի արարքներ, և՛ որպես գործողություններ, որոնք քրեորեն պատժելի չեն:

[13]Մանրամասն տե՛ս՝ Hate Crimes Today (qrd.org):

Ատելության հիմքով հանցագործությունները տարբերվում են քրեական հետապնդում ենթադրող այլ իրավախախտումներից հետևյալ պատճառաբանությամբ՝ քաղաքացիների իրավահավասարության խախտմամբ, տուժողի վրա ունեցած ազդեցությամբ, տուժողի ներկայացրած համայնքի վրա ունեցած ազդեցությամբ, պետության անվտանգության խնդիրներով: Նախ, հանցագործություն կատարողը թիրախավորում է անձին կամ անձանց խմբին՝ վերջիններիս որոշակի պաշտպանված հատկանիշների պատճառով, դրանց նկատմամբ անհանդուրժողականությամբ պայմանավորված, ինչով կասկածի տակ է դնում կամ մերժում է որոշակի պաշտպանված հատկանիշ ունեցող անձի՝ հասարակության մյուս մասի հետ հավասար գոյության հնարավորությունը: Ուստի ատելության հիմքով հանցագործությունը խախտում է հավասարությունը հասարակության անդամների միջև:

Բացի այդ, պետք է փաստենք, որ ատելության հիմքով հանցագործությունն ուղղված է ոչ թե միայն տուժողի, այլ ամբողջ համայնքի դեմ: Սա արտահայտվում է նրանով, որ տուժողի՝ հանցագործությամբ պատճառված հոգեկան տառապանքն ավելի մեծ է համեմատած այլ հանցագործությունների հետևանքով պատճառված հոգեբանական հետևանքներին, քանի որ այս դեպքում զոհը գիտակցում է, որ չի կարող վերացնել իր նկատմամբ ոտնձգության պատճառը, այն է՝ իր պաշտպանված հատկանիշը, ինչը վերջինիս հավելյալ հուզմունք և տառապանք է պատճառում: Ավելին, հանցագործություն կատարած անձն իր վարքագծով ուղերձ է հղում տուժած անձին և տուժած անձի պաշտպանված հատկանիշները կրող անձանց խմբին, որ իրենք ընդունված չեն և տվյալ հասարակության մաս կազմելու իրավունք չունեն, ինչը որոշակի սոցիալական խմբերի ավելի խոցելի է դարձնում:[14]

Ատելության հիմքով հանցագործությունն ուղղված է պետության անվտանգության և հասարակական կարգի դեմ. անհանդուրժողականությամբ և խտրականությամբ պայմանավորված հանցագործությունները նպաստում են որոշակի հատկանիշներ ունեցող խոցելի խմբերի մեկուսացմանը, հասարակության բևեռացմանը և զանգվածային անկարգությունների աճին, ինչը, ծայրահեղ դեպքերում, կարող է վերաճել ընդհուպ մինչև պատերազմական իրավիճակների երկրի սահմանների ներսում և դրա սահմաններից դուրս:

Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանք նախ՝ արտահայտվում են հետապնդումներով ու սպառնալիքներով, հետագայում արդեն՝ բռնության, ուժի կիրառման սպառնալիքներով, հոգեբանական ճնշումներով, առողջությանը վնաս պատճառելով, և այլ գործողություններով: Նշված գործողությունները կատարվում են ինչպես ընտանեկան հարաբերություններում՝ ընտանիքի անդամների միջև, այնպես էլ հասարակական այլ հարաբերություններում՝ աշխատանքային միջավայր, ուսումնական հաստատություն, հասարակական վայրեր, և այլն:

Հետազոտության մասնակիցները կատարված գործողությունները բնութագրել են հետևյալ կերպ (տե՛ս Գրապատկեր 6.):

---

[14] Տես՝ "Hate crimes today: An age-old foe in modern dress", American Psychological Association position paper released in 1998:

Գծապատկեր 6. Հետևյալ գործողություններից որո՞նք եք ասոցացնում կատարված դեպքի հետ

Ինչ վերաբերում է իրավախախտի ինքնությանը, ապա հիմնականում դրանք ընտանիքի անդամներն են, որոշ դեպքերում միայն՝ իրավախախտն ունի պաշտոնական դիրք (տե՛ս Գծապատկեր 7. և Գծապատկեր 8.):



Ատելության խոսք, սպառնալիք

Ատելության խոսքը, սպառնալիքը, բնութագրվում է հայհոյանքներով, ֆիզիկական ուժով, բռնություն գործադրելու կոչերով:

«*Քայլում էի փողոցում, հետևիցս ռեպլիկներ էին թողնում: Կանգնեցի, մոտեցա հարցրեցի, թե ինչու են վիրավորում, իրենք սկսեցին կռվել իմ հետ: Երբ դանակներ հանեցին, ես սկսեցի փախչել, վազեցի մոտակա մանկապարտեզը, որտեղից օգնություն խնդրեցի, դրանից հետո գնացի ոստիկանություն*» - հատված հետազոտության հարցաթերթիկից, Տրանսգենդեր անձ:

«Այգում մի քանի տղաներ բուլինգի էին ենթարկում պանսեքսուալ տղային, ասում էին, որ իր և ինչ-որ տղայի մեջ սեքսուալ կապ է եղել, ծաղրում էին դա, և երբ հասկացան, որ դժվարանում է վախից պատասխանել, սկսեցին հումորներ անել: Ես այդ ժամանակ խառնվեցի և ասացի, որ իրավունք չունեն այդպես խոսել» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ականատես, ԼԳԲՏԻՔ անձ):

«…Քոլեջում անցնելիս՝ իմ հետևից ինձ աղջկա անուններով են դիմում, հետևիցս գոռում են…» - հատված հետազոտության հարցաթերթիկից, Տրանսգենդեր անձ:

«Ընկերներիս հետ զբոսնում էի Անգլիական այգում, մի խումբ երիտասարդներ մոտեցան, սկսեցին վիրավորական արտահայտություններ անել, հետապնդել, անգամ փորձեցին հարվածել ինձ…» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ԼԳԲՏԻՔ անձ:

Ատելության խոսքը ուղեկցվում է նաև ֆիզիկական ուժ գործադրելու՝ զոհին վնասելու, ծեծելու, սպանելու սպառնալիքներով:

«Ես զբաղվում եմ սեքս աշխատանքով: Իմ հաճախորդներից մեկը եկել էր իմ բնակության վայր, դռան հետևից զոռում էր, սպառնում էր, որ կսպանի իրեն, ձեռքում ինչ-որ առարկա կար, նմանացրի նռնակի: Ոչ ադեկվատ վիճակում էր: Մի քանի րոպե շարունակ սպանության սպառնալիքներ էր հնչեցնում...» - հատված հետազոտության հարցաթերթիկից, Տրանսգենդեր անձ:

«...Ինձ վիրավորում էր, հայոյանքներ տալիս, ես քեզ «կսպանեմ», «կմորթեմ», եթե չանես կդանակահարեմ...» - հատված հետազոտության հարցաթերթիկից, Տրանսգենդեր անձ:

«*...Հայրս ասաց՝ դու համասեռամոլ ես ու ինձ խայտառակում ես...*» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ԼԳԲՏԻՔ անձ:

Ֆիզիկական բռնություն, ֆիզիկական ուժի գործադրում

Ֆիզիկական բռնությունը ուղեկցվում է ծեծով, և կարող է առողջությանը վնաս պատճառել: Ֆիզիկական բռնության դեպքերն առավել հաճախ հանդիպում են ընտանիքում՝ զոհի հարազատների, մասնավորապես՝ ծնողների կողմից: Ֆիզիկական բռնության դեպքեր տեղի են ունենում նաև ուսումնական հաստատություններում՝ ընկերների կողմից, հասարակական այլ վայրերում:

«Դպրոցի ճաշարանում հերթին սպասելիս հագուստս ետևից քաշեցին, գցեցին գետնին և սկսեցին ոտքերով հարվածներ հասցնել՝ դեմքիս, մեջքիս, փորիս...» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ԼԳԲՏԻՔ անձ:

«Քոլեջում տղաներից մեկը, ով գեյ է, գրկել էր մի աղջկա: Քոլեջի տղաները, ովքեր տեղյակ էին գրկողի սեռական կողմնորոշվածությունից, որոշում են ծեծել: Խմբով եկել էին, քանի որ ինքն էլ արդեն քոլեջում չէր, քոլեջից դուրս հանդիպում են նրա մյուս գեյ ընկերոջը, ու սկսում են ծեծել» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ԼԳԲՏԻՔ անձ:

«...Սեռական կողմնորոշվածության մասին իմանալուց հետո՝ պարբերաբար ծեծի են ենթարկել, հասցրել սեռական բնույթի վիրավորանքներ: Բռնի ուժով պահել են տանը և անգամ բուժօգնություն չեն տրամադրել: Ուզում էի ինքնասպան լինել...» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ԼԳԲՏԻՔ անձ:

«...Տանը գիշերազգեստով էի, մայրս տեսավ, որ մարմինս մազահեռացված է, սկսեց վիճաբանել հետս, որ նման բաներ անում են միայն աղջիկները, չի կարելի, ամոթ է: Սկսեց վիրավորական բառերով դիմել ինձ...» - հատված հետազոտության հարցաթերթիկից, Տրանսգենդեր անձ:

«…Գնացի իմ սենյակ: Հայրս տուն եկավ, մայրս հորս պատմեց իմ ու իր միջադեպը, հարս ինձ զցեց բազմոցին ու սկսեց ինձ խեղդել: Օգնության հասավ էլի տատիկս, սկսեց հորս վրա ջղայնանալ…» - հատված հետազոտության հարցաթերթիկից, Տրանսգենդեր անձ:

Բռնության ժամանակ տուժողները հիմնականում ունենում են տեսանելի մարմնական վնասվածքներ: Առավել հաճախ չեն դիմում բժշկական օգնության, քանի որ չեն ցանկանում, որ այլ անձինք իմանան դրա մասին, թաքցնում են ընտանիքից և ընկերներից, ենթադրում են, որ բավարար օգնություն չեն ստանա, եթե բուժհաստատությունում իմանան իրենց սեռական կողմնորոշվածության մասին (տե՛ս Գծապատկեր 9.):

Ազատության սահմանափակում

Ազատության սահմանափակումը ևս ատելության հիմքով գործողության տեսակ է: Այն արտահայտվում է ազատ տեղաշարժման սահմանափակմամբ կամ արգելմամբ, ազատ ընտրության կատարման արգելքով: Ազատության սահմանափակումը խոչընդոտում է Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց հասարակությանը լիարժեք ինտեգրմանը: Ազատության սահմանափակման դեպքերը հիմնականում կատարվում են ընտանիքի անդամների, հարազատների կողմից՝ տանը փակելով, ընկերների հետ շփման հնարավորությունը սահմանափակելով, հեռախոսը կամ կապի այլ միջոցները վերցնելով, սոցցանցերը վերահսկելով, և այլն:

«…Մայրը տանից դուրս է հանել ընկերուհուն: Աղջկա վրա սկսել է հոգեբանական ճնշում գործադրել, վերցրել է հեռախոսը, արգելել է ընկերուհու հետ շփվել, ստիպողաբար տարել է հոգեբանի մոտ…» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ականատես:

«…Իմ ինստագրամի էջն էին մտել ընտանիքիս անդամները, քանի որ մայրիկիս հեռախոսից էի մտել իմ էջը, ու պահպանվել էր հեռախոսի մեջ, ուստի իմացել էին իմ սեռական կողմնորոշվածության մասին: Դրանից հետո ինձ հանեցին քոլեջից, մի ամիս չեմ սովորել, տանն եմ եղել՝ ծնողներիս հսկողության տակ, չեմ ունեցել կապի միջոցներ, չեմ շփվել ընկերներիս հետ…» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ԼԳԲՏԻՔ անձ:

Հոգեբանական բռնություն

Բռնության ամենատարածված տեսակը, որը զուգորդվում է ատելության հիմքով գրեթե բոլոր հանցավոր արարքների ժամանակ, հոգեբանական բռնությունն է: Այն հիմնականում կիրառվում է Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ճնշումներ գործադրելու, իրենց սեռական կողմնորոշվածությունը հանրայնացնելու, ընտանքում, ընկերական շրջապատում նրանց մասին պատմելու և նմանատիպ այլ սպառնալիքներով: Հետազոտության գրեթե բոլոր մասնակիցները պատասխանել են, որ ենթարկվել են հեգոբանական ճնշումների, բռնության, և իրենց հետ տեղի ունեցած միջադեպերը հոգեբանական շատ ծանր հետևանքներ են ունեցել իրենց համար:

Հոգեբանական բռնության դեպքեր հանդիպում են տանը, աշխատավայրում, ծառայության ընթացքում, ուսումնական հաստատություններում, ընկերների կողմից, և այլն:

«… Այո, գրեթե ամեն օր եղել են ծաղրանքներ, հայհոյանքներ, հոգեբանական ճնշումներ…» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ԼԳԲՏԻՔ անձ:

«…Հոգեբանական ճնշումները այնքան մեծ էին, որ ստիպված, հաշվի չառնելով ֆինանսական դժվարությունները, ինքնակամ հեռացա աշխատանքից…» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ԼԳԲՏԻՔ անձ:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը չի անդրադառնում հոգեբանական բռնությանը և գործնականում այդպիսի հանցագործությունները անպատիժ են մնում, այնինչ հոգեբանական բռնությունը որպես ինքնուրույն հանցակազմ անհրաժեշտ է ներառել ՀՀ քրեական օրենսգրքում, դա բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից այդ առնչությամբ կայացրած վճիռներից: Այդ կապակցությամբ, պետք է նշել, որ ֆիզիկական խոշտանգմամբ սպառնալիքը ևս կարող է բերել հոգեբանական բռնության և հոգեկան խոշտանգման, ինչին անդրադարձել է ՄԻԵԴ-ը:

«Որևէ անձի խոշտանգմամբ սպառնալը կարող է համարվել որպես առնվազն անմարդկային վերաբերմունք (տե՛ս Քեմփբելը և Քոզանսն ընդդեմ Միացյալ Թագավորության, § 26) և «մասնավորապես, ֆիզիկական խոշտանգումից վախն ինքնին կարող է համարվել որպես հոգեկան խոշտանգում: Այն որակումը, թե արդյոք տվյալ ֆիզիկական խոշտանգման սպառնալիքը համարվում է հոգեկան խոշտանգում, կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, կախված է տվյալ գործի հանգամանքներից, այդ թվում, մասնավորապես՝ գործադրված ճնշման ծանրությունից և պատճառած հոգեկան տառապանքի ուժգնությունից» (Գեֆգենն ընդդեմ Գերմանիայի ([ՄՊ], թիվ 22978/05, ՄԻԵԴ 2010)):

Բռնաբարության դեպքեր, բռնաբարության փորձ

Թեև բռնաբարության կամ բռնաբարության փորձի դեպքերը տարածված չեն Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձանց շրջանում, այդուհանդերձ զոհի կարգավիճակում հայտնվում են երիտասարդները, սեքս աշխատանքով զբաղվող անձինք:

«Դպրոցում շրջազգեստով էի: Դպրոցի տղաներն ասացին, թե կարճ շրջազգեստ եմ հագել, չե՞մ վախենում, որ ինձ կբռնաբարեն կամ հենց իրենք կբռնաբարեն: Ասացին՝ գեղեցիկ ազդրեր ունեմ, սկսեցին գռեհիկ բառերով ծաղրել ինձ: Զանգեցի մորս, տաքսու բերեց, հագուստս փոխեցի…» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ԼԳԲՏԻՔ անձ:

«Մտա բակերից մեկը, որպեսզի ցայտաղբյուրից ջուր խմեմ: Բակում երկու տղամարդ, մոտավոր մինչև 50 տարեկան, մոտեցան, սկսեցին հարցուփորձ անել, ինձ քաշեցին դեպի շքամուտքերից մեկը ու բռնաբարեցին…» - հատված հետազոտության հարցաթերթիկից, Տրանսգենդեր անձ:

Հետապնդում

Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձինք հետապնդման ենթարկվում են առավել հաճախ սոցիալական հարթակներում, ընտանիքում՝ հարազատների կողմից:

Աշխատավայրում անհանդուրժողականություն

Անձանց սեռական կողնորոշվածությունը, գենդերային ինքնությունը, արտաքին բնութագրիչները հիմնականում հիմք են գործատուների համար նրանց աշխատանքի չընդունելու, իսկ արդեն աշխատողներին՝ աշխատանքից ազատման համար:

«…Մենեջերը տուժողի արտաքինը՝ որպես պատճառ ներկայացնելով, ստիպել է աշխատանքից ինքնակամ հեռանա, ասելով, որ սափրված, իր նուրբ դիմագծերի և երկար սանրվածքի պատճառով հաճախորդները չեն ցանկանում իրենց սպասարկի: Որպեսզի հաճախորդների կորուստ ու իրավական խնդիրներ չունենան, հաստատության տնօրինությունը ստիպիում էր, որպեսզի տուժողը ինքը հեռանա աշխատանքից…» - հատված հետազոտության հարցաթերթիկից, Տրանսգենդեր անձ:

«Աշխատավայրում տեղեկացել են անձի սեռական կողնորոշվածության վերաբերյալ, այնուհետև, սկսել են ճնշումներ գործադրել, բռնի ուժ կիրառել, ստեղծել են աշխատանքային անբարենպաստ պայմաններ, որպեսզի տուժողը ինքնակամ հեռանա աշխատանքից...» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ԼԳԲՏԻՔ անձ:

«Աշխատավայրում, որտեղ աշխատակիցների մի մասը չգիտեր իմ սեռական կողնորոշվածության մասին, այնպես էր ստացվել, որ տեղեկացել էին աշխատակիցներից մեկից, ում հետ մտերիմ էի, ում հետ կիսվում էի: Ընկերս միամտաբար, առանց հետին մտքերի, մյուս աշխատակիցներին պատմել էր իմ սեռական կողնորոշվածության մասին: Աշխատակիցները սկսեցին իմ նկատմամբ պասիվ ագրեսիվ վերաբերմունք դրսևորել, ուզում էին ծեծել, բայց միջամտեց տնօրինությունը, ով սաստեց բոլորին, ինչի արդյունքում մնացի աշխատավայրում աշխատելու...» - հատված հետազոտության հարցաթերթիկից, ԼԳԲՏԻՔ անձ:

Հետազոտության մասնակիցների պատասխաններից արձանագրենք, որ հետազոտված դեպքերից միայն 13-ով են տուժողները դիմել ոստիկանություն, որոնցից 3 դեպքով ոստիկանության արձագանքը եղել է աջակցող, 2 դեպքում եղել է ծաղրական և վիրավորական, 2 դեպքում՝ մերժողական, իսկ մնացած 6 դեպքում՝ չեզոք: Ոստիկանության տարբերակված, ծաղրական վերաբերմունքը կապված է եղել տուժողի սեքս աշխատող լինելու հետ: Հետազոտված գործերից 4-ը գտնվում են նախաքննության փուլում:

2.4 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ինչպես արդեն նշեցինք՝ ատելության հիմքով հանցագործությունները տարբերվում են քրեական հետապնդում ենթադրող այլ իրավախախտումներից մի շարք շարժառիթներով ու դրդապատճառներով. նախ, հանցագործություն կատարողը թիրախավորում է անձին կամ անձանց խմբին՝ վերջիններիս որոշակի պաշտպանված հատկանիշների պատճառով՝ սեռական կողմնորոշվածություն, գենդերային ինքնություն, այնուհետև նրանց նկատմամբ անհանդուրժողականության և ատելության դրսևորմամբ կատարում է գործողություն, որը կարող է նույնանալ քրեական օրենսգրքով պատասխանատվություն ենթադրող որևէ արարքի հետ:

ՀՀ քրեական նախկին օրենսգիրքով[15], ընդհանուր առմամբ երկու տեսակի մոտեցումներ էին սահմանված ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելության խոսքի սահմանման հարցում՝ առանձին հանցագործություններ և հանցագործության բնույթը ծանրացնող հանգամանքներ:

Հայաստանի Հանրապետության քրեական նախկին օրենսգրքի 143-րդ հոդվածով նախատեսվում էր ընդհանուր այն կարգավորումը, որով քրեականացվում է մարդու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված ռասայից, մաշկի գույնից, էթնիկական ծագումից, տարիքից, սեռից, քաղաքական կամ այլ հայացքներից, և այլն: Գործնականում, սակայն, այդ հոդվածը հազվադեպ է կիրառվել:

Քրեական նախկին օրենսգրքի թերություններից մեկն այն էր, որ օրենսգրքում նախատեսվում էին ատելության շարժառիթների ընդամենը երեք հիմքեր՝ ազգայինը, էթնիկը և կրոնականը, մինչդեռ խտրականության արգելված հիմքերի և ատելության հիմքով կատարվող հանցագործությունների հնարավոր շարժառիթների շրջանակը շատ ավելի լայն է և ներառում է խտրականության համընդհանուր արգելքի հայեցակարգը: Օրենսդրական այս բացի պատճառով չեն բացահայտվում և անպատիժ են մնում ատելության շարժառիթներով կատարվող մի շարք հանցագործություններ, մասնավորապես՝ անձի սեռական կողնորոշվածության և գենդերային ինքնությամբ պայմանավորված: Օրինակ, եթե Տրանսգենդեր ԼԳԲԻՔ համայնքի ներկայացուցչին ոստիկանները տանում են ոստիկանություն և վատ վերաբերմունքի արժանացնում իր սեռական կողնորոշվածության պատճառով, ապա եթե անգամ ոստիկաններին մեղադրանք է առաջադրվում վատ վերաբերմունքի համար, նրանք պատասխանատվության չեն ենթարկվում ատելության հիմքով կատարված հանցագործության համար, քանի որ վերոհիշյալ 63-րդ հոդվածը՝ որպես ընդհանուր իրավակարգավորում, կամ Քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը՝ որպես հատուկ նորմ, չեն նախատեսում սեռական կողմնորոշվածությունը կամ գենդերային ինքնությունը՝ որպես ատելության առանձին տարրեր, որոնք ծանրացնում են քրեական պատասխանտվությունը կամ պատիժը:

---

[15]Քրեական նախկին օրենսգիրքն ուժի մեջ է մտել 2003 թվականի օոգոստոսի մեկից և գործել է մինչև 2022 թվականի հունիսի 30-ը: ՀՀ քրեական նոր օրենսգիրքն ուժի մեջ է մտել 2022թ-ի հուլիսի 1-ից:

ՀՀ քրեական նոր օրենսգրքով սահմանվել են ավելի լայն հիմքեր, որոնցով կարելի է խտրականության արգելքի խախտման մասին պնդում ներկայացնել քրեական օրենսդրության ներքո: Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ECRI) հանձնարարականներով[16] պայմանավորված՝ քրեական օրենսգրքում հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը համարվում է քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք:[17] «Այլ հանգամանքներով պայմանավորված ատելության» ձևակերպումը պետք է որ, ի թիվս այլնի, ներառի նաև սեռական փոքրամասնություն կազմող խմբերը, քանի որ Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովը խորհուրդ էր տվել բարեփոխել քրեական օրենսգիրքը՝ արգելված հիմքերի ցանկում ներառելով սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը:[18]

Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձինք, որոնց սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը հնարավոր չէ արտաքինից տարբերել, առավել պաշտպանված են, քան այն անձինք, որոնք ունեն իրենց ՍԿԳԻ-ն ընդգծող որևէ հատկանիշ, տարր (սանրվածք, հագուստ, ընդգծված դիմահարդարում, շարժումներ): Ուստի արտաքին տեսքը հիմք է հանդիսանում այլ անձանց համար կատարելու ենթադրություններ տվյալ անձի սեռական կողնորոշվածության և գենդերային ինքնության վերաբերյալ: Շատ հաճախ արտաքին նշանները չթաքցնելը վտանգում է ինչպես տվյալ անձի, այլև իր զուգընկերոջ առողջությունը, կյանքը, ինչպես նաև առաջացնում է հոգեբանական ապրումներ:

Հետազոտության մասնակիցները այն հարցին, թե ո՞րն է եղել դեպքի/հարձակման դրդապատճառը, և արդյո՞ք կարծում են, որ հարձակումը կամ դեպքը առնչություն ունի իրենց (իրական կամ ենթադրյալ) գենդերային ինքնության, արտահայտման կամ սեռական կողմորոշվածության հետ, պատասխանել են հետևյալ կերպ (տե՛ս Գծապատկեր 10.), ընդ որում, հնարավորություն են ունեցել տալ մեկից ավելի պատասխաններ:

Գծապատկեր 10. Դեպքի/հարձակման դրդապատճառը. Արդյո՞ք կարծում եք, որ հարձակումը կամ դեպքը առնչություն ունի Ձեր (իրական կամ ենթադրյալ) գենդերային ինքնության, արտահայտման կամ սեռական կողնորոշվածության հետ:

[16]Տես՝ Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ECRI) զեկույցը Հայաստանի մասին (մշտադիտարկման հինգերորդ շրջան), զեկույցն ընդունվել է 2016 թվականի հունիսի 28-ին:

[17]Տես՝ ՀՀ նոր քրեական օրենսգիրք, հոդված 71:

[18]Տես՝ Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի («ECRI») զեկույցն Հայաստանի մասին (մշտադիտարկման հինգերորդ շրջան), զեկույցն ընդունվել է 2016 թվականի հունիսի 28-ին:



Այն հարցին, թե իրավախախտը իմացել կամ ենթադրել է, թե զոհը Տրանսգենդեր ԼԳԲԻՔ անձ է, հետազոտության մասնակիցների պատասխանը եղել է շատ տարբեր: Նախ հիմնականում նշել են, որ հանցավորն իմացել է իրենց սեռական կողնորոշվածության, գենդերային ինքնության մասին, մի քանի դեպքերում միայն հանցավորը չգիտեր տուժողի սեռական կողնորոշվածության և գենդերային ինքնության մասին: Ներկայացված դեպքերից մի քանիսում հանցավորն իմացել է իրենց գենդերային ինքնության մասին հանցանքի ընթացքում, սակայն հարցվածքները դժվարացել են պատասխանել, թե որտեղից: Մնացած դեպքերում պատասխանել են հետևյալ կերպ՝

➢ *իրավախախտը տեսել է, որ տուժողը եղել է կանացի հագուստով, իսկզբանե հետևել է վերջինիս.*
➢ *իրավախախտը տուժողի սեռական կողնորոշվածության մասին իմացել է սոցիալական հարթակներից.*
➢ *տուժողը սեքս աշխատող է եղել.*
➢ *տուժողի մոտ ընկերներից մեկը տեղեկությունը հանրայանացրել է.*
➢ *կասկածներ են ունեցել և բռնի ուժով ստիպել են խոստովանել.*
➢ *իմացել էին, երբ տուժողի ինստագրամյան էջն են մտել.*
➢ *արտաքին տեսք՝ երկար մազեր, հագուստ.*
➢ *իրենք ասում էին, որ իրենց ասել են, որ տուժողը համայնքից է.*
➢ *տուժողի արտաքինը ենթադրել է, որ գեյ է.*
➢ *գտնվում են այնպիսի վայրում, որտեղ սովորաբար հավաքվում են տրանս անձինք.*
➢ *հանցավորը իր հաճախորդն է եղել և գիտեր իր սեռական կողնորոշվածության մասին.*
➢ *հագուստից, շարժուձևից.*
➢ *ընկերուհու ձեռքը բռնած է եղելի, դրանից էլ ենթադրել են.*
➢ *կասկածել են արտաքին տեսքից, այնուհետև տուժողը ինքն է խոստովանել իր սեռական կողմնորոշվածության մասին.*
➢ *քանի որ այգում հիմնականում ԼԳԲՏ համայնքից են երիտասարդներ լինում, ենթադրվում է, որ դա է իրավախախտներին հուշել.*
➢ *տեղեկացված են եղել սեռական կողմնորոշվածության վերաբերյալ, գործընկերներից մեկը սկսել է ջերմ և ընկերական հարաբերություններ ստեղծել տուժողի հետ, այնուհետև սեռական կողմնորոշվածության վերաբերյալ լուրը պատմել է մյուս գործընկերներին և տնօրինությանը.*
➢ *մարմնի մազահեռացումից.*
➢ *գործընկեր էր հայտնել միամտաբար:*

Մեկ անգամ ևս փաստենք, որ Հայաստանում ներկայումս չկա ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի և խտրականության մասին տեսակավորված տվյալներ հավաքագրող կենտրոնացված մարմին կամ մեխանիզմ: Ուստի, հնարավոր չէ համապարփակ տվյալներ ստանալ Հայաստանում խտրականության գործելակերպի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար:[19]

[19]Ատելության շարժառիթով կատարված հանցանքների մասին վիճակագրական համապարփակ և տեսակավորված տվյալներ չկան՝ պայմանավորված տվյալների հավաքագրման և մշակման հնացած մեթոդաբանությամբ և մեխանիզմներով: Պետական մի քանի մարմիններ կան, որոնք հանցավորության տվյալներ են հավաքում և մշակում Հայաստանում: Նրանց թվում են Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, ինչպես նաև՝ խտրականության դեմ պայքարի ոլորտում մասնագիտացող մի քանի ՀԿ-ներ: Հանցագործությունների մասին տվյալներ հավաքագրող և մշակող կենտրոնական մարմինը ՀՀ ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնն է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով հետազոտության արդյունքները, եզրահանգում ենք.

> Տրանս ԼԳԲԻՔ անձինք ամենից հաճախ ենթարկվում են բռնության և սպառնալիքների, ծեծի, վիրավորանքի, ծաղրի, հետապնդման և ազատության սահմանափակման, հոգեբանական ճնշումների:
> Արտաքին տեսքը հիմք է հանդիսանում այլ անձանց համար կատարելու ենթադրություններ տվյալ անձի սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության վերաբերյալ:
> Արտաքին հատկանիշները չթաքցնելը վտանգում է ինչպես տվյալ անձի, այլև՝ իր զուգընկերոջ առողջությունը, կյանքը, ինչպես նաև առաջացնում է հոգեբանական ապրումներ երկուսի մոտ:
> Դեպքերի մեծամասնությունը՝ 22 (39,3 %) դեպք տեղի են ունեցել զոհի տանը, 6 (10,7 %) դեպք՝ ուսումնական հաստատությունում (դպրոց, քոլեջ), 6 (10,7 %) դեպք՝ աշխատավայրում, 5 (8,9 %) դեպք՝ այգում, 3 (5,4 %) դեպք՝ համացանցում, իսկ մնացած 14 (25%) դեպքերը՝ հասարակական այլ վայրերում (այգում, կանգառում, և այլն):
> Տրանս ԼԳԲԻՔ անձինք ամենաշատը քննադատվում, ծաղր ու ծանակի են ենթարկվում, թիրախավորվում տղամարդկանց կողմից, քան՝ կանանց:
> Տղամարդ նույնասեռական անձանց նկատմամբ անհանդուրժողականությունն արտահայտվում է վիրավորական արտահայտություններով, ծաղրով, հայհոյանքներով, ֆիզիկական բռնությամբ:
> Տրանս ԼԳԲԻՔ անձինք առավել հաճախ թիրախավորվում են երկու և ավելի անձանց կողմից (66,1 %):
> Ֆիզիկական բռնության դեպքերն առավել հաճախ հանդիպում են ընտանիքում՝ զոհի հարազատների, մասնավորապես՝ ծնողների կողմից, և ուսումնական հաստատություններում՝ ընկերների կողմից:
> Բռնության ժամանակ տուժողները հիմնականում ունենում են տեսանելի մարմնական վնասվածքներ՝ կապտուկներ, քերծվածքներ, կտրվածքներ:
> Ազատության սահմանափակման դեպքերը հիմնականում կատարվում են ընտանիքի անդամների, հարազատների կողմից՝ տանը փակելով, ընկերների հետ շփման հնարավորությունը սահմանափակելով, հեռախոսի կամ կապի այլ միջոցներից զրկելով, սոցցանցերը վերահսկելով, և այլն:
> Տրանս ԼԳԲԻՔ անձանց հետ պատահած միջադեպերը հիմնականում հոգեբանական շատ ծանր ազդեցություն են ունեցել իրենց վրա:
> Հոգեբանական բռնության դեպքեր հանդիպում են տանը, աշխատավայրում, ծառայության ընթացքում, ուսումնական հաստատություններում, ընկերների կողմից, և այլն:
> Բռնաբարության կամ բռնաբարության փորձի դեպքերը տարածված են Տրանս սեքս աշխատողների շրջանում:

> Տրանս ԼԳԲԻՔ անձինք հետապնդման ենթարկվում են առավել հաճախ սոցիալական հարթակներում, ընտանիքում՝ հարազատների կողմից:
> Անձանց սեռական կողմնորոշվածությունը, գենդարային ինքնությունը, արտաքին բնութագրիչները հիմնականում հիմք են գործատուների համար նրանց աշխատանքի չընդունելու, իսկ արդեն աշխատողներին՝ աշխատանքից ազատելու համար:
> Տրանս ԼԳԲԻՔ անձինք, որոնց սեռական կողմնորոշվածությունը և գենդերային ինքնությունը հնարավոր չէ արտաքինից տարբերել, առավել պաշտպանված են, քան այն անձինք, որոնք ունեն իրենց ՍԿԳԻ-ն ընդգծող որևէ հատկանիշ, տարր (սանրվածք, հագուստ, ընդգծված դիմահարդարում, շարժումներ):
> Տրանս ԼԳԲԻՔ անձինք հաճախ չեն դիմում իրավապահ մարմիններին՝ վստահություն չունենալու պատճառով:
> Տրանս ԼԳԲԻՔ անձինք նախընտրում են իրենց խնդիրներով դիմել իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին, կամ պատմել, կիսվել ընկերների հետ:
> Առավել հաճախ չեն դիմում բժշկական օգնության, քանի որ չեն ցանկանում, որ այլ անձինք իմանան իրենց մասին:
> Տրանս ԼԳԲԻՔ անձինք ունեն մտավախություն, որ բավարար օգնություն չեն ստանա, եթե բուժհաստատությունում իմանան իրենց սեռական կողմնորոշվածության կամ գենդերային ինքնության մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես եզրակացություն՝ ցանկանում ենք արձանագրել, որ Հայաստանում խիստ անհրաժեշտ է կատարել որոշակի օրենսդրական բարեփոխումներ՝ Տրանս ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ կատարվող բռնությունները կանխարգելելու, ինչպես նաև հասարակական և իրավական մի շարք ոլորտներում տրանս և ԼԳԲԻՔ անձանց մի շարք կենսական ծառայությունները հասանելի դարձնելու համար:

Ինչպես արդեն նշեցինք, ՀՀ քրեական նոր օրենսգրքով սահմանվել են ավելի լայն հիմքեր, որոնցով կարելի է խտրականության արգելքի խախտման մասին պնդում ներկայացնել քրեական օրենսդրության ներքո. այն է՝ քրեական օրենսգրքում հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը համարվում է քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք:

Նման փոփոխություններից հետո կարիք է առաջանալու վարել գործերի վիճակագրություն, ինչը ևս դժվարություններ է առաջացնելու:

Այսպես, հանցագործությունների տեսակները դասակարգված են ըստ քրեական օրենսգրքի հոդվածների՝ չկոնկրետացնելով հոդվածների այն մասերը, որոնք նախատեսում են ծանրացնող հանգամանքները, ինչպիսիք են ազգային, էթնիկ կամ ռասայական ատելությունը: Ուստի, պարզ չէ, թե ինչպես են իշխանությունները պայքարում ատելության հիմքով հանցագործությունների դեմ, երբ հանցակազմը սահմանված է հանցագործության ծանրացնող հանգամանքներում: Ուստի, տվյալները մշակվում են ընդհանրական կերպով, որը չի արտացոլում մանրակրկիտ վիճակագրական տվյալներ, և ատելության հիմքով հանցագործությունների մեծ մասը դուրս է մնում վիճակագրական հաշվետվություններից:

Ոստիկանությունում կրթական բարեփոխումներ.
Միևնույն ժամանակ, առ այսօր խնդիր է մնում ոստիկանության և քննչական մարմինների վերաբերմունքը տրանս ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ, ուստի, անհրաժեշտ է իրականացնել որոշակի կրթական և ուսումնական ծրագրեր նրանց հետ: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ նշված անձինք հաճախակի ոստիկանության բաժանմունքներում ոչ պատշաճ վերաբերմունք են ցուցաբերում համայնքի ներկայացուցիչների նկատմամբ, ծաղրում են և թույլ չեն տալիս իրացնելու իրենց իրավունքները: Այս տեսանկյունից պետք է նշել, որ Կազմակերպությունը մի քանի դեպքերով դիմումներ է հասցեագրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, որոնք վերաբերում են ոստիկանությունում տրանս ԼԳԲԻՔ անձանց իրավունքների ոտնահարմանը:

Մասնավորապես, մի դեպքով, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի քննիչը հրաժարվում էր վերադարձնել տրանս անձից խուզարկությամբ վերցված անձնական օգտագործման հեռախոսը, և միայն Կազմակերպության բողոքներից հետո՝ ուղղված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, քննիչը ստիպված վերադարձրեց հեռախոսը:

Այդպիսի դեպքերը ցույց են տալիս, որ դեռևս շատ աշխատանքներ կան իրականացնելու՝ հասնելու նմանատիպ դեպքերի չեզոքացմանը և տրանս ԼԳԲԻՔ անձանց իրավունքների պաշտպանությանը:

Պետական մարմիններ և սպասարկման ոլորտ.

Տրանս ԼԳԲԻՔ անձինք ենթարկվում են խտրականության նաև պետական այլ մարմինների հետ հարաբերություններում և անհավասար պայմաններ են ստանում այլ անձանց համեմատ: Դա կարող է վերաբերել ծառայությունների, իրավունք վերապահող փաստաթղթերի ստացմանը և այլ դեպքերին, երբ ծառայություն տրամադրողը անհարկի ձգձգում է տրանս ԼԳԲԻՔ անձանց իրավունքների իրականացումը, ինչն ապահովված է օրենքով:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սպասարկման ոլորտում տրանս ԼԳԲԻՔ անձանց մատուցվող ծառայությունները հասանելի դարձնելուն: Տվյալ դեպքում ուղենիշային է «Մալի» սպորտայի ակումբի կողմից երեք տրանս ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ դրևորված խտրական մոտեցումը, երբ համայնքի անդամներին չէին թույլատրել մարզվել սպորտային ակումբում: Արդյունքում Կազմակերպությունը կարողացավ հասնել արդարության վերականգմանը դատական կարգով: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ օրենսդրության մեջ պետք է հստակ ամրագրվի տրանս ԼԳԲԻՔ անձանց նկատմամբ ցանկացած տեսակի խտրականությունը՝ պայմանավորված նրանց գենդերային ինքնությամբ կամ սեռական կողմնորոշվածությամբ: Միայն նման կարգավորումը հնարավորություն կտա հնարավորինս բացառել խտրականության դեպքերը:

ՀՀ առողջապահության նախարարությանը.

Հայաստանի Հանրապետությունում որևէ կերպ կարգավորված չէ անձի սեռափոխությունը, ինչը հանգեցնում է բժշկական և դրանից բխող նաև իրավական խնդիրների: Սեռափոխության և հորմոնաթերապիայի խնդիրներին բախվում են տրանս անձինք, որոնք ենթարկվում են խտրական վերաբերմունքի թե՛ բժշկական պրակտիկայի, թե՛ իրավական կարգավորումների բացակայության պատճառով:

ՀՀ-ում սեռափոխության վիրահատությունների և հորմոնաթերապիայի վերաբերյալ կլինիկական ուղեցույց առկա չէ, ուստի, վիրահատական միջամտության և հորմոնալ բուժման ցուցումները և կարգավորումները բացակայում են:

Հայ բժիշկները մեծամասամբ կրթված չեն տրանս անձանց հետ աշխատալու համար: Բացի այդ, բացակայում են սեռափոխության և հորմոնաթերապայի հետ կապված օրենսդրական կարգավորումները. բժիշկները պարզապես չգիտեն ինչպես օգնել տրանս անձանց:

Այս ոլորտում Կազմակերպությունը համագործակցում է միջազգային կազմակերպությունների և մասնավորապես Հայաստանում Նիդերլանդների դեսպանության հետ՝ լուծելու բժշկական ծառայությունների ոլորտում տրանս անձանց խնդիրները, որոնք վերաբերում են այդ ծառայությունների հասանելիությանը, դեղերի մատչելիությանը և այլ խնդիրների:

Պետությունը պոզիտիվ պարտականություն ունի իր երկրի բնակչության կյանքի և առողջության ապահովման գործում և նման կարգավորումների բացակայությունը լուրջ խնդիր է թե՛ պետության պատասխանատվության առումով, թե՛ առավել ևս քաղաքացիների, ովքեր տրանսսեքսուալ անձինք են և պետության հոգածության կարիք ունեն:

ՀՀ սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք»:

Սահմանադրության 86-րդ հոդվածը, ի թիվս պետության պարտականությունների, սահմանում է բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:

ՀՀ կառավարությունը 2008թ. մարտի 27-ի թիվ 276-Ն որոշմամբ սահմանել է ՀՀ-ում բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը, որի հավելվածում 28-րդ կետում նշված է պլաստիկ վերակառուցողական և էսթետիկ վիրաբուժական բժշկական սպասարկման տեսակը, ինչը ենթադրում է, որ սեռափոխության վիրահատական միջամտությունը նույնպես կարող է ընդգրկված լինել բժշկական սպասարկման ենթակա միջոցների շարքում: Այնուամենայնիվ, այսօր Հայաստանում գործնականում անհնարին է նման վիրահատական միջամտության անցկացումը, քանի որ բժշկական կազմակերպությունները խուսափում են և չեն կատարում նման վիրահատություններ: Մասնավոր զրույցներում բժիշկները նշում են, որ Հայաստանում նման վիրահատություններն արգելված են, և նման վիրահատություն կատարող բժիշկներին սպառնում է ընդհուպ քրեական պատասխանատվություն:

Միևնույն ժամանակ, անձինք, որոնք այնուամենայնիվ ենթարկվում են սեռափոխության, կարիք ունեն բժշկական հսկողության և բուժման, որի բաղկացուցիչ մասն է կազմում հորմոնաթերապիան:

Հայաստանում այժմ առկա հորմոնալ դեղամիջոցների ցանկը սահմանափակ է, և եվրոպական երկրներում օգտագործվող ժամանակակից դեղամիջոցները Հայաստանում գրանցված չեն և չեն վաճառվում: Իսկ «Դեղերի մասին» ՀՀ օրենքը սահմանափակում է չգրանցված դեղերի ներմուծումը Հայաստան անձնական նպատակներով, արդյունքում, նշված ոլորտի կարգավորված չլինելը խոչընդոտում է տրանսսեքսուալ անձանց առողջության պահպանմանը, նրանց բուժմանը: Իսկ դեղերի գրանցումը, համաձայն «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի, կարող է կատարվել արտադրողի կամ արտադրանքի համար պատասխանատու այլ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի հայտի հիման վրա, որը նաև տվյալ դեպքում սահմանափակում է հորմոնալ դեղամիջոցների օգտագործումը տրանսսեքսուալ անձանց կողմից այդպիսի դեղերի սահմանափակ (չգրանցված) լինելու պատճառով:

Ուստի, ամփոփելով, պետք է նշել, որ Հայաստանում բացակայում է տրանսսեքսուալ անձանց բուժման կլինիկական ուղեցույցները, համապատասխան որակավորում ունեցող բժիշկների թիվը սահմանափակ է, Հայաստանում գրանցված չեն ժամանակակից հորմոնալ դեղամիջոցները, իսկ դրանց ներկրումը անձնական նպատակներով օրենքի համաձայն սահմանափակ բնույթ է կրում:

Ուստի, մեր առաջարկն է ՀՀ առողջապահության նախարարությանը՝

- Մշակել տրանսսեքսուալ անձանց սեռափոխության վիրահատության և հորմոնաթերապիայի կլինիկական ուղեցույցներ:
- Մշակել օրենսդրական կարգավորումներ՝ հեշտացնելու համար ՀՀ հորմոնաալ դեղամիջոցների ներկրումը և սպառումը տրանսսեքսուալ անձանց համար:

Եզրափակելով վերոգրյալը՝ պետք է նշել, որ Կազմակերպությունը շարունակելու է աշխատել պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների, ՁԼՄ-ների հետ՝ առաջ մղելու տրանս և ԼԳԲԻՔ անձանց իրավունքների պաշտպանության խնդիրները, հասնելու նրանց տրամադվող ծառայությունների մատչելիությանը, մշակելու և իրականացնելու օրենսդրական բարեփոխումներ՝ ի նպաստ տրանս և ԼԳԲԻՔ անձանց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Զեկույցներ, հոդվածներ

▪«ԼԳԲՏ» անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում», տեսությունից իրականություն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ, 2016թ.:
▪ «ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի ուղեցույց օգնող մասնագետների համար», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2021 թ.:
▪ «Խտրականությունը, ատելության հանցագործությունները և ատելության խոսքը Հայաստանում. տվյալների հավաքագրում», Իրավիճակի վերլուծության զեկույց, Արա Ղազարյան, 2019թ.:
▪ Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի զեկույցը Հայաստանի մասին (մշտադիտարկման հինգերորդ շրջան), 2016թ:
▪ “Hate crimes today: An age-old foe in modern dress”, American Psychological Association position paper released in 1998.

Իրավական ակտեր և միջազգային փաստաթղթեր

▪ՀՀ սահմանադրություն, 2015 թվականի փոփոխություններով:
▪ՀՀ օրենքը «Դեղերի մասին», 2016թ.:
▪ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 1999թ.:
▪ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 2022թ.:
▪ՀՀ քրեական օրենսգիրք, 2003թ.:
▪ՀՀ քրեական օրենսգիրք, 2022թ.:
▪ՀՀ օրենքը «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին», 2013թ.:
▪ՀՀ օրենքը «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին», 2005թ.:
▪ՀՀ օրենքը «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին», 2021թ.:
▪ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, 1950թ.:
▪Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966թ.:
▪Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, 1966թ.:

Կայքեր

http://rightsidengo.com/
https://www.coe.int
https://www.echr.am/home.html

RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

+374-11-880-770

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ